# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 05 (1355) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 23, 2008
VOLUME 28, NO. 05 (1355) SATURDAY, FEBRUARY 23, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԱՏԱԳՈՅՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՊՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԹՆՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԻՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՄԻԱՑԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ



*Փետրուար 21-ին Օփերայի հրապարակին վրայ սկսած նստացոյցին ելոյթ կ'ունենայ Լեւոն Տէր-Պետրոսեան*



*Փետրուար 20-ին բազմահազար ժողովուրդ բողոքի ցոյցի ելած էր Երեւանի փողոցներուն վրայ*

*Երեքշաբթի, Փետրուար 19-ին տեղի ունեցած Հայաստանի նախագահական ընտրութիւնները յատկանշուեցան բռնութիւններով, ապօրինութիւններով եւ լայնածաւալ այնպիսի խախտումներով, որոնք անգամ մը եւս կու գան կասկածի տակ առնելու ընտրական ամբողջ գործընթացը եւ պաշտօնական արդիւնքներու համաձայն ընտրուած նախագահի օրինականութիւնը:*

*Շատ մը քաղաքական դիտորդներու կարծիքով տեղի ունեցածը կարելի չէ անգամ որակել ընտրութիւններ: Տիրապետողը ծեծն ու ֆիզիքական ճնշումներն էին, ձայներու հաշուարկման ժամանակ ելեքտրական հոսանքներու անջատումներուն ընկերակցող տուփերու մէջ ապօրէն կերպով լեցուած քուէաթուղթերն էին, ժողովուրդի վրայ կատարուած ճնշումներն էին, մէկէ աւելի անգամներ եւ երկրէն բացակայողներու փոխարէն կատարուած քուէարկութիւններն էին:*

*Ստորեւ՝ դէպքերու զարգացման ընթացքը ընտրութիւններու աւարտէն ետք:*

Երեքաբթի երեկոյան ժամը 8-ին, քուէարկութեան աւարտին, Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները վստահ էին իրենց թեկնածուի յաղթանակին եւ չվարանեցան շնորհաւորելու Հայաստանի ժողովուրդը՝ յաղթանակի առթիւ:

«Ի հեճուկս իշխանութեան, աւազակապետութեան, մենք յաղթել ենք հանրապետութեան ողջ տարածքում: Մեր ստացած տուեալները ապացուցում են, որ եղել է շատ բարձր մասնակցութիւն եւ ընտրութեանը մասնակցածների ճնշող մեծամասնութիւնը իր ձայնը տուել է մեր թեկնածուին՝ հանրապետութեան հիմնադիր նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին»,- յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի պետ Ալեքսանդր Արզումանեանը: Ան յայտնեց, որ գործող իշխանութիւնները ինչպէս 2000-ին, 2005-ին, 2007-ին պիտի ընէ ամէն ինչ, որպէսզի կարողանան կեղծել, եւ աւելցուց.«Վստահ եմ, որ այս անգամ հասարակութիւնը գիտի, թէ ում է իր ձայնը տուել, գիտի իր ձայնի արժէքը, կարեւորութիւնը եւ թոյլ չի տալու որ ուէւէ մէկը հերթական անգամ իրենից գողանայ իր քուէն: Այս յաղթանակի համար ես ուզում եմ շնորհաւորել հասարակութեանը, եւ վստահ եմ, որ բոլորդ էլ տիրապետում էք իրավիճակին եւ գիտէք, թէ ինչ քայլեր են իրականցրել իշխանութիւնները»:

Միւս կողմէ սակայն, Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը եկաւ յայտարարելու թէ, քուէարկութեան մասնակցած է 1 միլիոն 669 հազար 114 ընտրող եւ այս ձայները բաշխուած են հետեւեալ ձեւով:

Սերժ Սարգսեան՝ 859, 451 ձայն 51,66 տոկոս

Լեւոն Տէր-Պետրոսեան՝ 349,774 ձայն 21,02 տոկոս

Արթուր Բաղդասարեան՝ 271,688 ձայն 16,3 տոկոս

Վահան Յովհաննիսեան՝ 100,515 ձայն 6,04 տոկոս

Մնացեալ թեկնածուները ստացած են մէկ տոկոս եւ աւելի պակաս ձայներ:

Փետրուար 20-ին, ԵԱՀԿ-ի դիտորդները Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսին յայտարարեցին, որ Հայաստանի նախագահական ընտրութիւնները տեղի են ունեցած «հիմնականին մէջ երկրի ստանձնած միջազգային պարտաւորութիւններուն համապատասխան»:

Եւրոպացի դիտորդները, որոնք անցեալին կը խօսէին ընտրութիւններու ազատ եւ արդար ըլլալու կամ չըլլալու մասին, այսօր դադրած են օգտագործել այդ բառերը եւ փոխարէնը եկան ըսելու՝«Մենք երբեք չենք մեկնաբանէր արդիւնքը, մենք կը մեկնաբանենք գործընթացը»:

Նոյն օրը, աւելի քան 200 հազար երեւանցիներ համախմբուելով Մատենադարանի առջեւ եւ ապա մայրաքաղաքի փողոցներով ցոյցի դուրս գալով եկան յայտարարելու թէ, չեն ճանչնար ընտրութիւններու արդիւնքները:

Ժողովուրդի առջեւ իր ունեցած ելոյթի ընթացքին Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց թէ, իրենք ունին գործողութիւններու յստակ ծրագիր:

«Բիրտ ուժը բռնութիւն է գործադրել մեր ժողովրդի կամքի վրայ: Զնայած իշխանութիւնների եւ քրէական աշխարհի գործադրած բոլոր ջանքերին, երեկոյան ժամը 8-ին ժողովրդի թեկնածուն արդէն յաղթել էր», - ըսաւ Տէր-Պետրոսեան եւ որպէս հիմնական ընտրախախտում առանձնացուց յաւելեալ քուէաթերթիկներու տպագրութիւնը: - «Առաջին ամենաանօրինական, ամենայանցագործ խնդիրը լուծեց Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովը՝ ժամը 8-ին արդէն հրապարակելով, որ ընտրութիւններին մասնակցել է 1 միլիոն 640 հազար մարդ: Մենք ամենայն պատասխանատուութեամբ յայտարարում ենք՝ Հայաստանի ռէալ ընտրողների թիւը 1 միլիոն 700 հազար է, եւ ընտրութիւններին իրականում մասնակցել է 1 միլիոն 100 հազար մարդ: Մնացածը՝ այդ 500 հազարը, այն էր, որի մասին մենք մշտապէս ահազանգել ենք: Իշխանութիւնները սկզբից եւեթ տպագրել են 500 հազար յաւելեալ քուէաթերթիկ»:

«Իշխանութեան եւ քրէական աշխարհի այսպիսի սերտացում, ինչ որ մենք տեսանք երէկ, երեւի աշխարհի ոչ մի երկրում գոյութիւն չունի», - յայտարարեց Լեւոն Տէր Պետրոսեան:

«Ոչ մի բիրտ ուժ չի կարող մեզ խանգարել այս երկրում հասնել օրէնքի վերջնական իշխանութեան: Մենք ունենք գործողութիւնների յստակ ծրագիր: Թող Ռոբերդ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը, որոնք այժմ իրենց առանձնասենյակներում հետեւում են այս հանրահաւաքին, չկասկածեն, որ մենք մեր յստակ ծրագրով

Շար.ը էջ 2

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԻՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*հասնելու ենք լիակատար յաղթանակի». ըսաւ Տէր-Պետրոսեան ու աւելցուց,- «Թող չմտածեն, որ մեզ կարող են հանել հաւասարակշռութիւնից: Մենք լինելու ենք շատ զուսպ, հանդարտ, վստահ, առանց կասկածելու մեր վերջնական յաղթանակի մէջ: Այս անգամ մենք չենք ընկրկելու եւ հասնելու ենք այն բանին, որ լիարժէք տօնենք մեր յաղթանակը՝ ես նկատի ունեմ 1998-ի, 2003-ի եւ 2008-ի յաղթանակները»:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթի աւարտին Երեւանի կենտրոնական փողոցներու բնակիչները իրենց տան պատուհաններէն կը դիտէին, թէ ինչպէս հոծ բազմութիւնը կը պոռար. «Պայքար, պայքար մինչեւ վերջ», «Լեւոն նախագահ», «Սերժիկ հեռացիր»:*

*Մաշտոցի պողոտայով եւ Ամիրեան փողոցով մարդկային հոծ խումբը մօտեցաւ Կառավարութեան շէնքին եւ ամօթանք տուաւ հոն գտնուող ոստիկաններուն: «Միացէք մեզ, դուք հա՞յ էք, թէ՞ ազգի թշնամի»,- կոչ ըրին անոնք ոստիկաններուն:*

*Երթը շարունակուեցաւ Սախարովի հրապարակով եւ Նալբանդեան փողոցով՝ համնելով Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի շէնքը: Հոս ցուցարարներուն կազմ ու պատրաստ կը սպասէին ոստիկանները, ինչ որ աւելի բարկացուց ժողովուրդին: «Սուտասաններ», «դաւաճաններ»,- այսպէս կը որակէին ԿԸՅ-ի անդամներուն:*

*Երթի մասնակիցները կանգ առնելով Ազատութեան հրապարակը, շարունակեցին կէսօրին սկսած հանրահաւաքը:*

*Երեկոյեան ելոյթ ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. ատենապետ Լիւդմիլա Սարգսեան: «Մենք միասին ենք, ճիշդ ենք, մենք միշտ յաղթող ենք: Այս ճանապարհին ոչ մէկը մեզ չի կարող կանգնեցնել: Այն արիութիւնն ու քաջութիւնը որ տեսանք ժողովրդի կողմից, մեզ ոգեւորել ու յոյս է տուել: Այսուհետեւ երբ կանգնում է ժողովուրդը, ոչ մի բարդութիւն չկայ այլեւս»,-ըսաւ ան:*

*Ընկերուհի Սարգսեան յայտնեց, որ ինքը անկեղծօրէն կը ցաւի, որ նոր սերունդը 88-ը չէ տեսած. «Բայց այսօր ես ասում եմ, որ հպարտանում եմ նրանց քաղաքացիական գիտակցութեամբ: Անոնք հպարտ կանգնած են մեր կողքին եւ գիտենք, որ մեր երկիրը տէր ունի ի դէմս այս երիտասարդների, մենք նրանց համար ենք կառուցում»:*

*Զորեքշաբթի օրուայ հանրահաւաքը ցրուեցաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի յաջորդ օրուայ համար խոստացած անակնկալով:*

*Հինգշաբթի օր ժողովուրդը դարձեալ սկսաւ համախմբուիլ Ազատութեան հրապարակը: Այս անգամ զգալի ներկայութիւն էր երիտասարդութիւնը, որոնք ձգելով իրենց համալսարանական դասերը, եկած էին միանալու համաժողովրդական շարժումին:*

*Մինչ ոստիկանները բարձրախօսներով կոչ կ'ընէին ժողովուրդին պարպել հրապարակը, քանի որ հաւաքը արտօնուած չէր, ժողովուրդը աւելի մեծ թիւերով կու գար միանալու ցուցարարներուն:*

*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր--Պետրոսեան յայտարարելով իր խոստացած անակնկալի մասին յայտնեց, որ Հայաստանի պաշտպանութեան երկու փոխնախարարները՝ զօրավարներ Մանուէլ Գրիգորեան եւ Գագիկ Մելքոնեան յայտարարած են ժողովուրդի վստահութեան արժանացած թեկնածուն պաշտպանելու մասին:*

*«Մանուէլ Գրիգորեանը եւ Գագիկ Մելքոնեանը յայտարարել են, թէ կանգնած են ժողովրդի կողքին եւ պաշտպանելու են ժողովրդի վստահութեանն արժանացած թեկնածուին», - ըսաւ Լեւոն Տէր-Պետրոսեան հրապարակուի վրայ հաւաքուածներուն:*

*«Նրանք յայտարարել են նաեւ, որ թոյլ չեն տայ, որ բանակը խառնուի քաղաքականութեանը եւ գործադրուի սեփական ժողովրդի դէմ»,- յայտնեց Տէր-Պետրոսեան:*

*Առաջին նախագահը տեղեկացուց, որ այժմ բանակցութիւններ տեղի կ'ունենան ժողովուրդի կողմը ներկայացնող երկու փոխնախարարներուն եւ իշխանու-*



*թիւններու կողմը ներկայացնող Գլխաւոր շտաբի պետ Սէյրան Օհանեանի միջեւ:*

*Ան վստահութիւն յայտնեց, որ բանակի ողջ հրամանատարութիւնը կը միանայ երկու փոխնախարարներուն:*

*Լեւոն Տէր-Պետրոսեան կոչ ըրաւ ուսանողութեան՝ վաղուանէ սկսեալ համալսարաններէն ներս յայտարարել դասադուլ եւ միանալ նստացոյցին:*

*Հինգշաբթի երեկոյեան, Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի անդամ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ Երեւանի կենտրոնը սկսած է մնայուն նստացոյց:*

*«Ազատութեան հրապարակում սկսւում է անդադար ակցիա՝ համաժողովրդական շարժման հազարաւոր ներկայացուցիչներ նստելու են նստացոյցի: Կառուցուելու է վրանային աւան, եւ մենք ուզում ենք հասնել մեր պահանջների կատարմանը»,- «Ազատութիւն» ռատիոկայանին յայտարարեց Նիկոլ Փաշինեան:*

*Հինգշաբթի օր հանրահաւաքին միացաւ նաեւ «Օրինաց Երկիր» կուսակցութիւնը, որու անունով ելոյթ ունեցաւ կուսակցութեան փոխնախագահ Հեղինէ Բաչիրեան:*

*Մինչ աշխարհի շատ մը երկիրներու ղեկավարներ կ'աճապարէին շնորհաւորելու Սերժ Սարգսեանին ուշագրաւ դիրքորոշում ունեցաւ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը, մտահոգութիւն յայտնելով ձայներու հաշուարկման ժամանակ տեղ գտած խնդիրներու մասին:*

*«Մենք տակաւին կ'ուսումնասիրենք ընտրութիւններու անցկացման վերաբերեալ մեր ստացած տարբեր զեկոյցները», - Փետրուար 21-ին Ուաշինկթընի մէջ լրագրողներուն յայտարարեց Պետական Քարտուղարութեան խօսնակ Ֆտկար Վասկեզ:*

# ՍՈՎՈՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Երէկ անցկացուած նախագահական ընտրութիւնները եւս մէկ անգամ ցոյց տուեցին մեր իրականութեան երկփեղկուածութիւնը: Մի կողմից՝ իրական կեանքը, միւս կողմից՝ այն վիրտուալ իրականութիւնը, որը ներկայացնում են մեր պատասխանատու հեռուստաընկերութիւնները: Ըստ վերջիններիս՝ ընտրութիւններն անցել են հանգիստ, օրէնքի սահմաններում, երկրի ղեկավարները կատարել են իրենց քաղաքացիական պարտքը (ինչի մասին ռեպորտաժները ցոյց են տրւում իւրաքանչիւր ալիքով օրական տասը-տասնհինգ անգամ), դատախազութիւնն ու ոստիկանութիւնը ստուգում են ահազանգերը, եւ դրանք իրականութեանը չեն համապատասխանում, կամ ծայրայեղ դէպքում՝ բոլորին ծեծում-ջարդում-փշրում են Տէր-Պետրոսեանի կողմնակիցները: Իրական կեանքը ցոյց է տալիս հակառակ պատկերը, որին մենք քաջ ծանօթ ենք 1995թ.-ից՝ զանգուածային ընտրակաշառք, լցոնումներ, ծեծկռտուք, բռնութիւններ՝ ընդդիմութեան վստահուած անձանց նկատմամբ, ընտրակարուսել եւ այլն: Իհարկէ, 21-րդ դարում դժուար է ամբողջութեամբ ապաւինել հեռուստաեթերը վերահսկողութեան տակ պահելուն, ինչն անում է մեր իշխանութիւնը: Մայրաքաղաքի բնակիչները երէկ հնարաւորութիւն ունէին մէկ ժամ լսելու «Ազատութիւն» ռադիոկայանի հաղորդումը, իսկ համակարգիչ ունեցողները կարող էին ընտրութիւնների ռէալ պատկերը ստանալ ինտերնետի միջոցով:*

*Օրինակ, «Ա1+»-ի կայքում մենք հնարաւորութիւն ունենք տեսնելու տեսանիւթեր՝ տեղամասերում լցոնումների եւ բռնութիւնների մասին: Այսքանից յետոյ, կարծում եմ, հասկանալի է, թէ ինչու «Ա1+»-ը եթեր չունի, իսկ «Գալան» շուտով չի ունենայ: Վերջինս այսօրուայ վիճակով եթերում միակ ալիքն է, որը, թէկուզեւ Գիւմրիի մասշտաբով, ցոյց է տալիս իրականութիւնը: Հասկանալի է նաեւ, թէ ինչու են յարձակումների թիրախ դառնում լրագրողները, որոնք փորձում են ֆոտո եւ տեսախցիկների վրայ ամրագրել ընտրախախտումները:*

*Այսօր լոյս կը տեսնեն թերթերը եւ բնականաբար, Սերժ Սարգսեանի քարոզչութիւնն իրականացնող տպագիր լրատուամիջոցները կը շնորհաւորեն ժողովրդին՝ իրենց թեկնածուի փայլուն յաղթանակի առթիւ: Նոյնը կ'անեն նաեւ Տէր-Պետրոսեանի համար աշխատող թերթերը: Որպես ընտրող՝ շատ կ'ուզենայի համաձայնել վերջիններիս հետ, բայց, ցաւօք, իրականութիւնը փոքր-ինչ այլ է: Ընտրութիւնները, ինչպէս յայտնի է, միայն բուն քուէարկութիւնը չեն: Ընտրարշաւը այդ գործընթացի կարեւորագոյն բաղկացուցիչ մասն է: Երբ ընտրարշաւի ընթացքում բոլոր զանգուածային լրատուամիջոցները փառաբանում են մի թեկնածուին եւ փնովում՝ միւսին, խօսել արդար ընտրութիւնների եւ հետեւաբար՝ ոեւէ մէկի փայլուն յաղթանակի մասին, անհեթեթութիւն է: Այսպիսով, եթէ նոյնիսկ երէկ որեւէ բռնութիւն կամ լցոնում չլինէր, ինձ համար այս ընտրութիւնների արդիւնքները համոզիչ չէին լինի:*

*Թէ ինչ է լինելու մօտակայ օրերին՝ նոյնպէս դժուար չէ կանխագուշակել: Ընդդիմութիւնը կը հաւաքուի Մատենադարանի մօտ եւ կոչ կ'անի ժողովրդին սկսել քաղաքացիական անհնազանդութեան ակցիաներ: Կախուած այդ ակցիաների ուժգնութիւնից իշխանութիւնը կը կիրառի արցունքաբեր գազ, ռետինէ փամփուշտներ, ջրցան մեքենաներ եւ մահակներ, կը ձերբակալուեն ընդդիմութեան լիդերներն ու ակտիվիստները: Միջազգային դիտորդները «կիսաքաղցր» զեկոյց կը գրեն, որն իշխանութիւնը կը ներկայացնի որպէս դրական, իսկ ընդդիմութիւնը՝ որպէս հերթական ապտակ իշխանութիւններին:*

*Այս ընտրութիւնների միակ դրական դրսեւորումն այն է, որ ժողովուրդը կարծես թէ վերջնականապէս հասկացել է Արտաշէս Գեղամեանի դերն ու նշանակութիւնը Հայաստանի քաղաքական կեանքում:*

***ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ***
***«ԱՌԱՒՕՏ»***

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ**
**ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

## ԼՈՒՐԵՐ

# «ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՑՈՅՑ ՏԱԼ Հ1-ՈՎ»



Փետրուար 20-ին Մատենադարանի առջեւ հաւաքուած ժողովուրդը կը մերժէ ընդունիլ ընտրութիւններու պաշտօնական արդիւնքները

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Լեւոն նախագահ» «յաղթել ենք», «Սերժիկ հեռացիր» կոչերը չդադարեցին ողջ երթի ընթացքում, ապա շարունակուեցին Ազատութեան հրապարակում: Տեխնիկական խնդիրները լուծելուց յետոյ բեմ բարձրացաւ Նիկոլ Փաշինեանը, ով նախ ողջունեց հանրահաւաքի մասնակիցների վճռականութիւնը, ապա ոգեւորեց, նշելով, որ երթից յետոյ հանրահաւաքի մասնակիցների թիւը կտրուկ աճել է:

«Պահանջում ենք երթի ու հանրահաւաքի համակողմանի լուսաբանում, պահանջում ենք, որ ցոյց տան Հանրային հեռուստաընկերութիւնով, նաեւ միւս ալիքներով»,- ասաց Նիկոլ Փաշինեանը:

Ապա անդրադարձաւ դիտորդական առաքելութեան ներկայացուցիչների յայտարարութիւններին՝ նշելով, որ դրանք կարեւոր չեն, «ի վերջոյ ՀՀ ժողովուրդն է որոշում ընդունի այդ ընտրութիւնների արդիւքները, թէ ոչ»: Ապա նշեց, որ հրապարակում մարդիկ հաւաքուել են, քանի որ որոշում են կայացրել ազատուելու քոչարեանասերժական կլանից:

Նիկոլ Փաշինեանը խօսեց նաեւ Աւան համայնքում առեւանգուած Լեւոն Տէր-Պետրոսեանի վստահուած անձի մասին: «Նա Փարիզից եկել էր պաշտպանելու իր Հայաստան վերադառնալու իրաւունքը, սակայն արդարութիւնը տեսնում էք, չէ՞...»:

Յետոյ նա խօսափողը փոխանցեց ուկրաինաբնակ նկարիչ Վարդանին, ում ցուցահանդէսը վերջերս էր կազմակերպուել Հայաստանում եւ ով միացել է շարժմանը: Նա նախ պատճառաբանեց, թէ ինչու է միացել շարժմանը:

«88-ին առաջին իսկ օրերից միացել եմ շարժմանը, առաջին իսկ ընտրութիւններին դէմ եմ քուէարկել Տէր-Պետրոսեանին, իսկ երէկ ես իմ կամքը արտայայտեցի ընտրատեղամասում, որ Լեւոնը նորից դառնայ ՀՀ նախագահ»,-ասաց նկարիչ Վարդանը, ապա շարունակեց, նշելով, որ տարիները ցոյց տուեցին, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի օրօք աճում էր մի ընդդիմութիւն, որի ներկայացուցիչները Վազգէն Մանուկեանն ու Արշակ Սադոեանն էին:

«Նրանք ուժեղ մարդիկ էին ու մեծ կարողութիւն ունեն, սիւներ էին, բայց այսօր փլուզում են այդ սիւները»,-ասաց նա: Ապա շարունակեց. «Ես դէմ եմ եղել այդ իշխանութիւններին, բայց ես ազատ գործում էի՝ հրատարակում թերթ իմ ընկերների հետ, մշակոյթով զբաղւում, հենց այդ ժամանակ, ու թող վերադառնայ վերախմաստաւորուած նորը»:

Ուշ երեկոյեան «Ազատութեան» հրապարակում հանրահաւաքին խօսեցին «Քաղաքագէտների միութեան» նախագահ Հմայեակ Յովհաննիսեանը, Սոցիալ դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան առեւնապետ Լիւդմիլա Սարգսեանը, Հրանդ Բագրատեանը:

Նախ Հմայեակ Յովհաննիսեանը խօսեց այն մասին, որ անկախ նրանից, թէ ինչ դժուարութիւնների առաջ են հիմա կանգնած, արդէն յաղթել են եւ միասնութեան շնորհիւ են յաղթել: «Մենք, հաւատարիմ լինելով մեր զինակիցներին, ղեկավարներին եւ ժողովրդին շարունակելու իրենց կամքը, պէտք է միասնական կամքով շարունակել, ամրքել այն արդիւնքը, որ նուաճեցինք, բեղմնաւոր բայց դժուար պայքար է սպասում»,-ասաց Հմայեակ Յովհաննիսեանը:

Հրանդ Բագրատեանն էլ ասաց, որ այսօր ժամադրուել է ազատութեան հետ եւ երբեք չի ընկրնկի: «Երբեք չմտածէք, թէ մենք ընկրկելու ենք եւ տուն ենք գնալու եւ քանի որ մենք այսօր այստեղ ենք, հասել ենք սրան, թոյլ տուէք Լեւոն Տէր-Պետրոսեանին հռչակել նախագահ»:

# ԲՌՆՈՒԹԻՒՆ Է ԳՈՐԾԱԴՐՈՒԵԼ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ, ԼՐԱԳՐՈՂԻ ԵՒ ԴԻՏՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Փետրուար 19-ի օրուայ երկրորդ կէսին «Ազատութիւն» ռադիոկայանում ահազանգ ստացուեց, որ մայրաքաղաքի Էրեբունի համայնքի թիւ 13/16 ընտրատեղամասում բռնութիւն է գործադրուել Ազգային ժողովի պատգամաւորներ, «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամներ Արմէն Մարտիրոսեանի ու Զարուհի Փոստանջեանի եւ «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինէ Բարսեղեանի նկատմամբ:

Տեղամասում լցոնման փորձ է եղել, ինչը նկատել են յանձնաժողովի անդամները: Պատգամաւորները եւ լրագրողը փորձել են ֆիքսել երեւոյթը, ինչից յետոյ, Արմէն Մարտիրոսեանի խօսքով՝ «փորձել են տեղամասից հեռացնել լրագրողին»: Ինքը՝ Մարտիրոսեանը, փորձել է պաշտպանել լրագրողին:

«Յանձնաժողովի նախագահի տեղակալը, յանձնաժողովի նախագահի հետ միասին, հերթապահութիւն իրականացնող ոստիկանի միջոցով՝ մայորի կոչումով, փորձեց ինձ դուրս հրաւիրել», - «Ազատութիւն» ռադիոկայանին պատմեց Մարտիրոսեանը՝ յաւելելով, որ դէպքի մասին տեղեկացրել է ոստիկանութիւն: Քիչ անց ընտրատեղամաս է եկել Էրեբունի համայնքի ոստիկանապետը. - «Եւ ֆիզիկական ուժ գործադրելով իմ նկատմամբ՝ հրելով, խփելով, հայհոյեանք տալով, սպառնալիք տալով, որ կը տանի կը ծեծի եւ այլն, իր հետ նաեւ մի քանի ոստիկան կային յաղթանդամ: Ինձ խփելով, առաջ տարան, ու այդ պահին Լուսինէին հարուածել են որովայնի մասում: Նոյն ընտրատեղամասում միջադէպ է գրանցուել պատգամաւոր Զարուհի Փոստանջեանի հետ. հերթապահող մայորը քաշքշել է եւ հարուածել է Զարուհի Փոստանջեանին»:

«Ազատականութիւն եւ ժողովրդավարութիւն» հասարակական կազմակերպութեան նախագահ Նունէ Վարդունուն մի խումբ անձինք Գրողների միութեան շէնքում տեղակայուած թիւ 9/22 ընտրատեղամասում ժամը 4-ի սահմաններում խանգարել են կատարել դիտորդական առաքելութիւնը: Վարդունուց խլել էին դիտորդական վկայականը, անձնագիրը եւ լուսանկարչական ապարատը եւ թաքնուել Գրողների միութեան շէնքի մուտքի մօտ կանգնած ցեխոտած համարներով աւտոմեքենաներում:

Նունէ Վարդունին վրդովուած դիմում էր կողքին կանգնած ոստիկաններին եւ տասնեակ մարդկանց, թէ ինչո՞ւ չեն միջամտում:

«Ազատութիւն» ռադիոկայանին նա պատմեց, որ դիտորդական առաքելութիւն իրականացնելիս հենց տեղամասում են յարձակուել իր վրայ, ինքն էլ անմիջապէս դիմել է ոստիկանների օգնութեանը:

Վարդունին պատմեց, որ տեսախցիկը խլել են, երբ իրենք մօտեցել են մեքենային, պոկել պետհամարանիշը ծածկող կպչուն ժապաւէնը՝ լուսանկարելու համար: Նա ցոյց տուեց նաեւ 01SS907 պետհամարանիշով սպիտակ «Նիվա»-ն:

«Ոստիկանութիւնն անտարբեր կանգնած՝ նայում էր, թէ մեր ձեռքից ոնց են խլում կամերաները», - ասաց հասարակական կազմակերպութեան ղեկավարը: - «Ես անգամ կարող եմ ասել, որ իրենք հրահանգ տուեցին, որ կամերան վերցնեն»:

# ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը այսօր յայտարարեց, որ կուսակցութիւնը ընդունում է նախագահական ընտրութիւններում իրենց թեկնածու Վահան Յովհաննիսեանի պարտութիւնը:

«Մի բան պարզ է՝ մենք պարտուել ենք: Ինչի՞ հետեւանք է, ինչքանո՞վ է դա առարկայական ժողովրդի տրամադրութեան արտայայտութիւնը, ինչքանո՞վ է դա կեղծիքների հետեւանք՝ չեմ կարող ասել: Բայց մեր կազմակերպութիւնը ընդունակ է յաղթահարելու այս դժուարութիւնները», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Հրանդ Մարգարեանը Եռաբլուրում, որտեղ Ղարաբաղեան շարժման 20-ամեակի առիթով այցելած Դաշնակցութեան ղեկավար անդամները ծաղիկներ դրեցին զոհուած ազատամարտիկների շիրիմներին:

Հարցին, թէ ինչպէս կարող էր մի քանի ամիս առաջ (2007-ի մայիսի խորհրդարանական ընտրութիւններում) 13 տոկոս հաւաքած կուսակցութեան թեկնածուն ստանալ գրեթէ երկու անգամ քիչ քուէ (Վահան Յովհաննիսեանը, ըստ նախնական տուեալների, հաւաքել է շուրջ 6 տոկոս ձայն), Մարգարեանը, նախ ճշդեց՝ գրեթէ կէսն է, ու արձագանքեց. - «Դրանք այն անյայտ բաներն են, որ մեզ էլ են մտահոգում: Այս պատասխաններն ենք փորձում առարկայականօրէն գնահատել եւ եզրակացնել»:

Մարգարեանը ասաց, որ իրենք լուրջ վերապահումներ ունեն մի շարք ընտրատարածքների վերաբերեալ: Բացի այդ, նրա խօսքով՝ համատարած երեւոյթ է եղել ընտրակաշառքը: Նա չբացառեց, որ իրենք բողոքարկեն ընտրութիւնների արդիւնքները:

«Մենք եթէ քննարկում ենք, ուրեմն քննարկումն է, որ կը պայմանաւորի մեր յայտարարութեան բովանդակութիւնը: Քաղաքական չի լինի, առարկայական կը լինի», - յաւելեց նա:

Իր թեկնածուի պարտութիւնը, Հրանդ Մարգարեանի խօսքով՝ Դաշնակցութիւնը «բնականաբար ընդունում է»: Իսկ հարցին, թէ շնորհաւորելո՞ւ են յաղթած թեկնածուին, Մարգարեանը պատասխանեց. - «Դեռ ժամանակ կայ դրա համար»:

# ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ ՍԿՍՈՒՄ Է ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Նախագահական թեկնածու Արթուր Բաղդասարեանի նախընտրական գրասենեակը յայտարարել է Փետրուարի 19-ի ընտրութիւնների արդիւնքների վերանայման եւ բողոքարկման գործընթաց սկսելու մասին:

«Փետրուարի 19-ի քուէարկութիւնը արձանագրեց բազմաթիւ ընտրակեղծիքներ եւ ընտրախախտումներ, աւելին, ընտրական գործընթացը ուղեկցուեց ընտրական յանձնաժողովների անդամների եւ վստահուած անձանց ահաբեկման, չանտաժի եւ ծեծի ենթարկելու բազմաթիւ օրինակներով, ինչը կանխելու մասին մենք դեռեւս օրուայ երկրորդ կէսին հանդէս եկանք յայտարարութեամբ», - ասուած է թեկնածուի գրասենեակի յայտարարութիւնում: - «Բազմաթիւ ընտրական տեղամասերում զանգուածային լցոնումների, ընտրակաշառքների համատարած բաժանման, բաց եւ կրկնակի քուէարկութիւնների եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւնից յանձնաժողովի անդամների կողմից ներկայացուած գրաւոր բողոքների գրանցելու զանգուածային հրաժարուելու, բազմաթիւ տեղամասերում ձայների հաշուման ընթացքում կատարուած կեղծիքները կասկածի տակ են դնում ընտրութիւնների ազատութիւնը, օրինականութիւնը եւ արդարութիւնը»:

## ԼՈՒՐԵՐ

# ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵ՞Լ ԵՆ, ԹԷ՞ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄ



Միջազգային դիտորդները մամլոյ ասուլիսի ընթացքին

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Փետրուարի 20-ին ընտրութիւնների միջազգային դիտորդական առաքելութիւնը հրաւիրած ասուլիսում յայտարարեցին, որ փետրուարի 19-ի ընտրութիւնները հիմնականում համապատասխանել են երկրի ստանձնած միջազգային պարտաւորութիւններին, չնայած անհրաժեշտ են հետագայ բարելաւումներ գոյութիւն ունեցող մարտահրաւէրներին անդրադառնալու համար:

Դիտորդները յայտարարեցին, որ Հայաստանի իշխանութիւնները իրական ջանքեր են գործադրել նախորդ ընտրութիւններում նշուած թերութիւններին անդրադառնալու համար: «Սակայն հետագայ բարելաւումների եւ քաղաքական կամքի անհրաժեշտութիւն կայ»,- նշեց ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ եւ ԵԱՀԿ ԽՎ պատուիրակութեան ղեկավար Անն-Մարի Լիզանը: Ու թէեւ նրա խօսքում նշւում էր «հիմնականում համապատասխանել է», սակայն նա նկատեց, որ հանրային վստահութեան պակաս կա ընտրական գործընթացների վերաբերեալ: Եւրոդիտորդները ընդգծեցին պետութեան եւ կուսակցութիւնների գործառոյթների միջեւ յստակ տարանջատման բացակայութիւնը, ինչպէս նաեւ, «Քուէների հաշուարկման գործընթացը չի նպաստել մասնակիցների շրջանում կասկածների նուազեցմանը»,- ասաց տիկին Լիզանը: Դիտորդական առաքելութիւնների ղեկավարները բարձր գնահատեցին ընտրողների ակտիվ մասնակցութիւնը: Նրանք նկատեցին, որ հայ ընտրողը իրական քաղաքական այլընտրանքների միջեւ ընտրութիւն կատարելու լաւ հնարաւորութիւն է ունեցել: Նախնական զեկոյցում նշուած է նաեւ, որ թեկնածուները կարողացել են ազատ կերպով արտայայտել իրենց տեսակէտները եւ ակտիվ քարոզարշաւ են վարել:

«Համեմատած նախորդ նախագահական ընտրութիւնների հետ զգալի առաջընթաց է գրանցուել ընտրական գործընթացների նախապատրաստման, անցկացման գործում: Այդուհանդերձ, ընտրական ողջ միջավայրը եւ գրանցուած միջամտութիւնները տակաւին պէտք է ուշադրութեամբ գնահատուեն»,- ասաց Եւրախորհրդարանի պատուիրակութեան ղեկավար Մարի Ան Իսլեր Բիգանը, սակայն նաեւ յաւելեց՝ «ԵՄ-ն իր հարեւանութեան քաղաքականութեան միջոցով կը շարունակի աջակցել Հայաստանում ժողովրդավարութեան ամրապնդման գործընթացին»: Բաւականին լարուածութիւն կար ընտրութիւնների մթնոլորտի տեսակէտից, հնարաւոր չէ դրա մասին այսօր խօսել եւ գնահատել առանց կարողանալու յետադարձ հայեացք գցել: Տիկին Բիգանը յայտարարեց, որ իրենք շահագրգռուած են մեզանում ժողովրդավարութեան կայացման հարցում, նա անգամ փորձ արեց համեմատել մեզ Աֆրիկայի հետ, որտեղ տեղամասեր են եղել, ուր 100 տոկոսանոց ընտրութիւններ են ընթացել: Նա կոչ արեց արագ լուծել հակամարտութիւնը Ատրպէյճանի հետ, եւ յարաբերութիւններ հաստատել Թուրքիայի հետ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրութիւնների դիտորդական առաքելութեան ղեկավար Գերտ Արենսը մի քանի անգամ վստահեցրեց, որ սա դեռ միայն շատ նախնական զեկոյց է, եւ իրենք դեռ կը մնան Հայաստանում դիտարկելու գոյութիւն ունեցող մեխանիզմներով ընտրութիւններին առնչուող վէճերի լուծման գործընթացը:

Իսկ ԵԽԽՎ պատուիրակութեան ղեկավար Ջոն Պրեսկոտն էլ շեշտեց ընտրատեղամասերում քուէների հաշուարկման ընթացքի հետ կապուած կասկածները եւ կրկին ընդգծեց, որ զեկոյցը նախնական է: Նա նաեւ տեղեկացրեց, որ իրենք աշխատել են ՀՀ կառավարութեան, կուսակցութիւնների, եւ նախընտրական շտաբերի հետ: «Ա1+»-ի հարցին, թէ հնարաւո՞ր է, որ իրենց վերջնական զեկոյցը խիստ տարբերուի նախնականից, ինչպէս եղաւ Վրաստանում, դիտորդները կոմպլեմենտար պատասխան տուեցին, որ, իհարկէ, իրենք չեն ասում, որ լիովին համապատասխանել է եւրոպական չափանիշներին: «Մենք ասում ենք հիմնականում համապատասխանել են»,- ասաց Ջոն Պրեսկոտը: Իսկ մեր միւս հարցին, թէ տեղեա՞կ են վստահուած անձանց եւ լրագրողների դէմ բռնութիւնների դէպքերին, ասացին, որ տեղեակ են: «Բայց շատ անգամ ասում էին կրակոցներ են եղել, բայց դեռ պէտք է վստահ լինել, որ դրանք կապուած էին ընտրութիւնների հետ»,-ասաց Մարի Լիզանը: Իսկ «Ա1+»-ի միւս հարցը այն մասին էր, որ արդեօ՞ք կարծում, թէ ընտրութիւններին տրուած նման գնահատականներով անվստահութիւն են սերմանում եւրակառոյցների նկատմամբ, ուղղակի մոռացութեան տուեցին եւ չպատասխանեցին:

# ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՈՒԱՐԿԸ ԱՂԱՂԱԿՈՂ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ Է ԱՐՁԱՆԱԳՐԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երեւանի կենտրոնի թիւ 9/31 տեղամասում քուէարկութեան արդիւնքների վերահաշուարկի ժամանակ աղաղակող խախտումներ են արձանագրուել:



Երեւանի մէկ տեղամասէն ներս կատարուած վերահաշուարկման ընթացքին

Ընտրատարածքային ընտրական յանձնաժողովը, որը վերահաշուարկ է կատարել «Օրինաց Երկիր»-ը ներկայացնող տեղամասային յանձնաժողովի անդամ Հենրիկ Ստեփանեանի պահանջով, յայտնաբերել է, որ նախագահութեան թեկնածու Սերժ Սարգսեանի օգտին քուէարկել է ոչ թէ 709 ընտրող, ինչպէս պաշտօնապէս արձանագրուել է քուէարկութիւնից յետոյ, այլ ընդամէնը 395 ընտրող:

Լեւոն Տէր-Պետրոսեանի օգտին, ըստ քուէարկութեան օրը կազմուած արձանագրութեան, քուէարկել է 376 ընտրող, մինչդեռ վերահաշուարկի արդիւնքում պարզուեց, որ իրականում նա ունի 392 քուէ:

Արթուր Բաղդասարեանը իրականում ստացել է 184 քուէ, մինչդեռ Փետրուարի 19--ին արձանագրուել էր, որ նա ունի ընդամէնը 134 ձայն:

Հսկայական տարբերութիւն յայտնաբերուեց Վահան Յովհաննիսեանի դէպքում՝ արձանագրուել էր, որ նրա օգտին քուէարկել է ընդամէնը 3 ընտրող, այնինչ իրականում նրա օգտին քուէարկածների թիւը 120 է:

Ըստ պաշտօնական արձանագրութեան՝ Վազգէն Մանուկեանն ընդհանրապէս որեւէ ձայն չի ստացել, այնինչ այսօր պարզուեց, որ նրա օգտին այդ տեղամասում քուէարկել է 57 ընտրող:

Գրեթէ նոյնն է պատկերը Արման Մելիքեանի դէպքում՝ գրուել է 0 ձայն, իսկ այսօր պարզուել է, որ նրա օգտին 6 մարդ է քուէարկել:

Տիգրան Կարապետեանի օգտին տուած քուէները արձանագրութիւնում նուազեցուել են ուղիղ երկու անգամ՝ իրականում եղել է 22, իսկ գրուել է 11:

Թիւ 9 ընտրատարածքային ընտրական յանձնաժողովի նախագահ Եղիշէ Տէրտէրեանը պատրաստւում է դիմել դատախազութիւն: «Սա արտառոց, եզակի դէպք է», - ասաց նա »Ազատութիւն« ռադիոկայանի:

# ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՏԵՒՈՒՄ Է ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

## ՀԱՅ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆ ԱՍՈՒՄ Է՝ ՈՐ ՈՒԱՇԻՆԿՏՈՆՈՒՄ ՈՄԱՆՔ «ՎՐՈԴՈՎՈՒԱԾ ԵՆ», ՍԱԿԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՀԱՒԱՏՄԱՄԲ՝ ԴԱ ԱՅԴՊԷՍ ՉԷ

ՃՈՆ ՀԻՒԶ («ԱՐՄԵՆԻԱ ՆԱՈՒ»Ի ԹՂԹԱԿԻՑ): Ըստ վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեանի՝ Հայաստանի նախագահի ընտրութիւններին ԱՄՆ պետքարտուղարութեան որոշ ներկայացուցիչների առաջին եւ ոչ պաշտօնական արձագանքը «զարմանքն ու վրդովմունքն» է:

Կիրակոսեանը, որի յօդուածները յաճախ են լոյս տեսնում «Արմենիա Նաու» շաբաթաթերթում եւ «Ազատութիւն» ռադիոկայանի կայքում, եւ որ խորհրդատուութիւն է տրամադրում մի շարք միջազգային կազմակերպութիւնների, այդ թւում՝ ԵԱՀԿ-ին, ապրում է Երեւանում, սակայն ներկայումս մեկնել է գործուղման Ուաշինկթըն:

Կիրակոսեանը յայտնել է «Արմենիա Նաու»ին, որ Կապիտոլիումի բլրի որոշ պետական պաշտօնեաներ տեղեակ են ընտրութիւնների ընթացքում տեղ գտած կեղծիքների ու բռնութիւնների մասին ԶԼՄ-ների հաղորդագրութիւններին, եւ «Նրանց առաջին արձագանքն այն է, որ Հայաստանի իշխանութիւնները «թոյլատրելի սահմաններէն անցել են», իսկ այդ ընտրութիւններն արդէն քննադատւում են որպէս «բոլոր չափերն անցած»:

Սակայն Երեւանում ԱՄՆ դեսպանատան բարձրաստիճան մի պաշտօնեայ կտրականապէս հերքել է Կիրակոսեանի պնդումները:

«Ռիչարդ Կիրակոսեանը չի ներկայացնում ԱՄՆ կառավարութեան տեսակէտը», - ասել է դեսպանատան քաղաքական ու տնտեսական բաժնի պատասխանատու Սթիվեն Բենքսը: Նա նաեւ յայտնել է «Արմենիա Նաու»ին, որ Կիրակոսեանի պնդումներն անհիմն են:

«Ուաշինկթոնում քաղաքականութիւն մշակողները դեռեւս տեղեկութիւններ են ստանում, մեկնաբանութիւններ անելը դեռ վաղ է»:

Ըստ Կիրակոսեանի չնշած աղբիւրների՝ «Յատուկ նշւում են իշխանական շրջանակների կիրառած բռնութիւնների ու բացայայտ լցոնումների դէպքերը: Պետքարտուղարութեան որոշ ներկայացուցիչների յատկապէս զայրացրել է մի քանի օլիգարխների միջամտութիւնը (ընտրութիւնների ընթացքին)»:

Նա նշում է, որ Ուաշինկթոնում այս պահին տիրող կարծիքն այն է, որ եթէ հաղորդուած միջադէպերը ճիշտ են, ապա դրանք «անընդունելի» են»:

www.massisweekly.com

# ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ
## ՏԵՄՈՔՐԱՏՆԵՐԸ՝ ՇՈՒԱՐԱԾ

***ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ***

*Ամերիկեան նախագահական ընտրութիւնները կը շարունակեն զարմացնել եւ միեւնոյն ատեն, գրաւեցնել ամբողջ երկրի քաղաքական շրջանակները: Նոյնիսկ անոնք որ բաւականին կը ճանչնան այս երկրի բարդ եւ կնճռոտ ընտրական դրութիւնը, երկարատեւ նախնական (priamary) կոչուած, եւ կամ ներ-կուսակցական բաց նկարագրուած (caucus) ընտրաձեւերը փոխանակ աւելի յստակացնելու, առաւել եւս կը բարդացնեն ընդհանուր կացութիւնը:*

*Մեր վերջին յօդուածէն ասդին, երկու շաբաթներ անցած են, եւ արդէն ընտրական կացութիւնը երթալով աւելի կը պարզուի Հանրապետականներուն համար, իսկ աւելի կը բարդուի Տեմոքրատներուն համար:*

*Ուրեմն Հանրապետականներու նախագահական ցանկը ներկայիս կը բաղկանայ երկու թեկնածուներէ, որոնցմէ առաջինը՝ Ճոն Մքքէյն, կը թուի ապահոված ըլլալ իր կուսակցութեան թեկնածութիւնը: Այս, սակայն, առայժմ վերջնական չի թուիր, քանի որ իրապէս կուսակցութեան պահպանողական, ծայրայեղ շրջանակները տակաւին համոզուած չեն թէ Մքքէյն անվերապահօրէն կը ներկայացնէ իրենց տեսակէտները: Աւելի պահպանողական թուացող Միթ Ռոմնիի անակնկալ հրաժարումէն ետք, կուսակցութեան երկու թեկնածուները մնացին Ճոն Մքքէյն, որ սենաթոր մըն է Արիզոնայէն, եւ Արքանսաս նահանգի նախկին կառավարիչ՝ Մայք Հուքապի, որ թէեւ աւելի աջային պահպանողական մը կը թուի ըլլալ, եւ սակայն մինչեւ այսօր, չէ կրցած հաւաքել անհրաժեշտ թիւ մը տարբեր նահանգներէն, որպէսզի կարենայ մրցիլ Մքքէյնի 800է աւելի ապահոված ընտրող պատուիրակներու հետ: Ոմանց համար զարմանալի կը թուի թէ ինչո՞ւ Հուքապի չի հրաժարիր ի նպաստ Մքքէյնի, այս ձեւով իրապէս ապահովելու համար իր կուսակցութեան վազող «ձին», Ճոն Մքքէյնի վերջնական թեկնածութիւնը: Ի հարկէ, քաջալերուած իր պարագայական յաջողութիւններէն, Հուքապին կը թուի որոշ փառասիրութիւն մը ունի, ինչ որ իր իրաւունքն է, կամ նկատուելու իբրեւ հաւանական փոխ-նախագահի թեկնածու, Մքքէյնի կողքին, եւ կամ պատրաստուիլ 2012 եւ 2016 թուականներուն:*

*Առ այժմ ուրեմն հանրապետական թեկնածու Ճոն Մքքէյն, եթէ պիտի յաջողի Նոյեմբերի ընտրութիւններուն, բաւական լուրջ աշխատանք ունի տանելիք: Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, արժէ թուել Մքքէյնի յաջողութեան համար, անհրաժեշտ հետեւեալ կէտերը.*

*1.- Ապահովել անկախ (independent)ճանչցուած քուէարկողներու կարեւոր ձայներ: Այսպէս կը թուի որ այս ընտրութեան քուէարկողներու 1/3 թիւը անկախներէ կը բաղկանայ:*

*2. Ապահովել կամաւոր (volunteer) աշխատողներու «բանակ» մը, որոնք պիտի օգնեն իր ընտրապայքարին:*

*3. Ընտրել յարմարագոյն փոխնախագահութեան թեկնածու մը, օրինակի համար իր ներկայի մրցակից Մայք Հուքապին, կամ Միթ Ռոմնին:*

*4. Ապահովել իշխող նախագահ Պուշի օգնութիւնը, որ տակաւին կ՚ուշանայ:*

*5. Իրաքեան պատերազմի նպաստաւոր ընթացքը, եւ Մալիքի կառավարութեան հարցերու լուծումներ գտնելու պարտաւորութիւնը:*

*6. Տնտեսական գետնի վրայ, «Recession» ճանչցուած վտանգաւոր կացութիւնը, իրապէս պիտի դժուարացնէ Մքքէյնի թեկնածութիւնը:*

*7. Յուսալ որ Գոնկրէսի տեմոքրատները կը շարունակեն իրենց «սխալ» քաղաքականութիւնը եւ օգտուիլ անկէ:*

*8. Վերջապէս յուսալ որ տեմոքրատ նախագահական թեկնածուն կը նշանակուի Հիլըրի Գլինթոնը, որ չէ սիրուած երկրի ժողովուրդին գրեթէ կէսին կողմէ:*


Հիլըրի Գլինթոն

*Հիլըրիի պարագային արդէն մենք կը հասնինք տեմոքրատ կուսակցութեան ընտրական վիճակին, զոր «շուարած» նկարագրեցինք: Փոքրամասնական եւ սեւ Պարաք Օպաման յաղթանակէ յաղթանակ կը շարունակէ իր ընտրական ընթացքը: Անցեալ շաբաթ «Potomac» կոչուած երեք նահանգներու իր ընտրական յաջողութիւնը կը հասցնէ 8 յաղթանակներու, որոնցմէ հաւաքուած ընտրական պատուիրակներու (delegate) թիւը կը գերազանցէ Հիլըրիի հաւաքած թիւերը: Այնպէս կը տեսնուի որ Մարտ 4ին տեղի ունենալիք ընտրութեանց, Թեքսաս եւ Օհայօ, եթէ Հիլըրի լման յաղթանակ չտանի, յստակ կը դառնայ որ առաջնորդողի դիրքին մէջ պիտի գտնուի Պարաք Օպաման, որուն ելոյթները, բեմական իմաստով, ուղղակի հրապուրիչ հանգամանք ունին, ըլլալով լաւատեսական, միասնական, ոչ-ցեղային, եւ փոփոխութեան լօզունգին տակ:*


Պարաք Օպամա

*Օպամայի մօտ, իր ելոյթներու խորքէն աւելի ոճն է որ կ՚առինքնէ մարդոց ուշադրութիւնը եւ երկար ժամանակէ ի վեր նման ճարտար, խօսքային եւ լաւատեսական թեկնածու չէ տեսած ամերիկեան ընտրական կեանքը: Հակառակ անոր որ իր մօտ յստակ բանաձեւումներ տակաւին չեն տեսնուիր երկիր կարեւոր հարցերուն նկատմամբ, երկու բան յստակ կը թուի – իր սկզբնական հակառակութիւնը իրաքեան պատերազմին եւ Պուշի իշխանութեան պատմութենէն քշելու իր տրամադրութիւնը: Միւս կողմէ, Մքքէյնի մարդիկն ալ պիտի չուզէին որ Պարաք Օպաման ըլլար Մքքէյնի հակադրուող տեմոքրատ թեկնածուն:*

*Ի՞նչ կրնայ պատահիլ եթէ Հիլըրի եւ Պարաք չկարողանան բաւարար թիւ մը ապահովել կուսակցութեան թեկնածուն դառնալու համար: Այս պարագային կը խօսուի «Գեր ընտրողներու» (super delegates) ցանկի մը մասին, շուրջ 800 հոգիներ, որոնք կրնան «պարտադրել» թեկնածու մը, իբրեւ կուսակցութեան թեկնածուն: Օպամայի չար բախտէն, այս «Գեր ընտրողները» Գլինթըններու բարեկամներ կը թուին եւ կրնան կշիռը Օպամայէն կեդրոնացնել Հիլըրիի վրայ, եւ հոս է որ ժողովրդավարութիւնը կրնայ լուրջ հարուած ստանալ: Նոյնիսկ կը խօսուի կաշառակերութեան կողմնակցութեան եւ այլ նկատումներու մասին:*

*Պարագայ մը եւս կայ, որ ցարդ այդ մասին չի խօսուիր եւ սակայն Հիլըրիի խումբը, որ ներկայիս վերակազմուեցաւ, կրնայ յառաջ քշել: Այս Ֆլորիտայի եւ Միշիկընի նահանգներու թեկնածուներու պարագան է որ ի նպաստ Հիլըրիի «քուէարկեցին» եւ սակայն անոնց ձայները առ այժմ պատժամիջոցի ենթարկուած ըլլալով, կը մնան օդին մէջ: Հիլըրին կ՚ըսուի թէ կրնայ զանոնք վերակենդանացնել ի նպաստ իրեն եթէ նեղի մնայ…*

*Աշխարհի մեծագոյն ժողովրդավարական հանրապետութեան ընտրական դրութիւնը իսկապէս զարմանք կը պատճառէ աշխարհին, եւ կրնայ շուարում ստեղծել ընտրութեանց ժամանակ: Ամէն պարագային, նախապէս ալ մօտիկ անցեալին,ականատես եղած ենք ընտրական խեղաթիւրումներու…*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

***The Quality and Safe Choice for Your Child's High School Education***

AGBU HIGH SCHOOL – PASADENA

*OPEN ENROLLMENT FOR 2008-2009*

*Grades 9-12*

**The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.**

**Please call (626) 794-0363**

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# UCLA-Ի ՅԱՌԱՋԻԿԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ, ՔԵՍԱՊԻ ԵՒ ՏԷՕՐԹ-ԵՕԼԻ

*Փետրուար 29-Մարտ 1ին տեղի պիտի ունենայ «Պատմական Հայաստանի Քաղաքներ ու Գաւառներ» շարքին 17րդ գիտաժողովը: 1997էն ի վեր, Լոս Անճելոսի Քալիֆորնիոյ համալսարանի (UCLA) Հայ Կրթական Հիմնարկութեան անուան Արդի Հայոց Պատմութեան ամպիոնը նախաձեռնած է գիտաժողովներու այս աննախընթաց շարքին կազմակերպութեան, որուն արդիւնքն են արդէն անգլերէն եօթ հատորներ: Երկօրեայ գիտաժողովը պիտի կեդրոնանայ Տէօրթ-Եօլէն (Ջորք-Մարզպան) մինչեւ Մուսա Տաղ ու Քեսապ տարածուող շրջանին վրայ: պիտի կատարէ UCLAի Արդի Հայոց Պատմութեան ամպիոնի վարիչ՝ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանը: Այնուհետեւ, դոկտ. Յակոբ Չոլաքեան (Հալէպ), որ հեղինակած է Քեսապի եռահատոր պատմութիւն մը, պիտի ներկայացնէ Պէյլանէն մինչեւ Անտիոք ու Լաթաքիա գտնուող հայկական համայնքներու ուրուագիծ մը: Իրեն պիտի յաջորդեն դոկտ. Վերժինէ Սվազլեան (Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտ), որ պիտի քննէ Մուսա Տաղի բանահիւսութիւնը, եւ օրդ. Իզապէլ Սեդա Մավեան (Փարիզ-Երեւան), որ*



*Գիտաժողովին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Հայաստանէն, Հոլանտայէն, Մեծն Բրիտանիայէն, Սուրիայէն, Ֆրանսայէն, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու կարգ մը հիմնարկներէ ուսումնասիրողներ: Քալիֆորնիոյ Մուսա Լերան Հայրենակցական Միութիւնը, Լոս Անճելոսէն Քեսապի Կրթասիրացն ու Ջորք-Մարզպանի Հայրենակցական Միութիւնը ձեռնարկին կ՚աջակցին:*

*Ուրբաթ, 29 Փետրուար*

*Բացման նիստը՝ հայերէն լեզուով, տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Փետրուար 29ին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի «Գալայճեան» սրահին մէջ (3325 N. Glenoaks Boulevard, Burbank, 5 Goldern State Freeway, Buena Vista ելքը):*

*Գիտաժողովին ներածականը*

*պիտի խօսի 1909-1947 պատահած դէպքերուն առնչութեամբ Քեսապի ժողովուրդի հակազդեցութեան մասին:*

*Շաբաթ, 1 Մարտ*

*Շաբաթ, 1 Մարտին, առաւօտեան ժամը 10էն մինչեւ երեկոյեան ժամը 5 տեղի պիտի ունենան անգլերէն նիստերը (UCLAի Պրոտ (Broad՝ նախկին Dickson) սրահին մէջ: Առաւօտեան յայտագիրը պիտի բանայ օրդ. Ռութ Թովմասեան («Սէյվ» ծրագրի արխիւները, Ուոթըրթաուն, Մասաչուսեց), պատկերազարդ ներկայացումով: Այնուհետեւ դոկտ. Մինաս Գոճայեան (ՀԲԸՄ-ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան) պիտի ներկայացնէ Ջորք-Մարզպանի (Տէօրթ-Եօլ) 1896-1921ի ինքնապաշտպանութիւնները, իսկ պրն.Արամ Արքուն (Նիւ Եորք) պիտի ներկայացնէ յաւելեալ գրաւոր դիտողութիւններ: Փրոֆ. Վահրամ Շէմմասեան (Քալիֆորնիոյ Նահանգային համալսարան, Նորթրիճ) պիտի ուրուագծէ Մուսա Տաղի պատմութիւնը 19-20րդ դարերուն:*

*Օրուան երկրորդ նիստին ելոյթ պիտի ունենան դոկտ. Շուշան Փաթթի (Իւնիվըրսիթի Քոլէճ Լոնտոն), որուն զեկուցումը վերնագրուած է «Դրախտն անգամ կատարեալ չէ. յուշեր Քեսապէն»: Օրդ. Սեդա Ալթուղ (տոքթորական թեկնածու) Իւթրեխթի համալսարան, Հոլանտա) պիտի համեմատէ Սուրիոյ Ճեզիրէի եւ Քեսապի շրջաններուն մէջ համայնքային ինքնութիւններու կերտման գործընթացները, իսկ Յակոբ Չոլաքեան պիտի անդրադառնայ Քեսապին որպէս արդէն սփիւռքեան համայնք:*

*Ճաշի դադարին, դոկտ. Յակոբ Փանոսեան (Մուսա Լերան Հայրենակցական Միութիւն) եւ*

*Շար.ը էջ 19*

# ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ՌԱՃԸՐ ԳՈՒԲԵԼԵԱՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ

*Հայ եւ օտար դերասաններով ու մասնագիտական անձնակազմով շրջապատուած, Փետրուար 9էն 11 երկարող շաբաթավերջը, Նորթ Հոլիվուտի «Կրին Սգրինգ» սթիւտիոներու մէջ, բուռն թափով նկարահանուիլ սկսաւ Վարդանանց Հերոսամարտի երկրորդ դրուագը, շարժանկարային աշխարհի մէջ հանրածանօթ անուն դարձած, բեմադրիչ եւ տեսողական բջիջային արուեստներու մասնագէտ, երիցս օսկարակիր՝ Ռաճըր Գուբելեանի բեմադրութեամբ:*

*Ռաճըր, մանուկ հասակէն հմայուած էր Վարդանանց հերոսամարտով եւ երբ Նոր Զելանտա հրաւիրուեցաւ հռչակաւոր արուեստագէտներու հետ Լորտ Աֆ Տը Ռինկզ եռապատումի վրայ աշխատելու, հոն գաղափարը յղացաւ Վարդանանցը բեմականացնելու, պատկերներու լեզուով համայն մարդկութեան յուշելու, թէ Հայը, Քրիստոնէական հաւատքին ու խղճի ազատութեան համար ճակատող, անհաւասար պայքար մղող առաջին ժողովուրդը հանդիսացած է...*

*Մտաւորական իր գործակիցներուն հետ, հայ եւ օտար աղբիւրներէն կատարուած լուրջ ուսումնասիրութիւններու լծուելով, պատկերատախտակը, բեմագիրը, Story Board-ն ու նախագիծերը կը պատրաստէ ապագայ East of Byzantium, «փտարանդիներն ու մարտիկները» երեք դրուագներէ բաղկացած վաւերա-տրամային: Ու 1992ին, Նոր Զելանտա, թաց շաբաթավերջ մը, Գուբելեան շրջապատուած միջնադարը վերյուշող ձիաւորներով ու հետեւակ զինուորներով կը նկարահանէ Վարդանանց առաջին դրուագը:*

*Ըստ բեմադրիչին, «451ին պատահած ըմբոստութեան հոյակապ այդ դրուագը, քրիստոնեայ պետութեան մը կողմէ մղուած ազատագրական առաջին մարտն էր, երբ զօրավարն ու իր սակաւաթիւ զինեալները ստիպեցին, որ պարսիկները գերիշխան երկրի մը խղճի ազատութիւն շնորհող առաջին կայսրութիւնը հանդիսանան»:*

*Քրիստոնէական ամուր հաւատքի եւ մշակութային զարթօնքի կարեւոր քառուղիին, կայսերական հին աշխարհի փլուզումին ու Բիւզանդիոնի ծնունդով յատկանշուող ժամանակահատուածին միջեւ կը կանգնի East of Byzantium-ի վաւերա-տրաման:*

*Արդ, Համազգայինի Աւանդոյթներու Միաւորին հաւատաւոր անդամուհիները, գնահատելով ծրագրին ներկայացուցած համազգային եւ միջազգային արժանիքը, Fugitive Studios-ի հետ համախորհուրդ Փետրուար 24ին դրամահաւաքի լուրջ երեկոյի մը ձեռնարկած են նոր սերունդի համար կարեւոր շարժանկարային իրագործումին բերելու իրենց յոյժ գնահատելի աջակցութիւնը:*

*Ռաճըր Գուբելեան եւ Fugitive Studios-ի իր գործընկերները, ցարդ, անձնական միջոցներով, հոյակապ այս ծրագիրը հասցուցին ներկայ իր հանգրուանին: Մէկ ու կէս միլիոն գնահատուող հումկու այս ժապաւէնին իրագործումը կարօտ է լուրջ ներդրումներու: Բայց նախ քան երջանիկ այդ օրը, Համազգայինի Աւանդոյթներու Միաւորի անդամուհիներուն մեկնած ձեռքն եւ ստեղծած բարոյական նեցուկը աւելի քան իրենց դերը պիտի ունենան Վարդանանց Հերոսամարտի նկարահանման ծրագրի իրագործման:*

*Մուտքի տոմսերուն համար դիմել՝ Ռիթա Տէմիրճեանին հեռաձայն՝ (818) 445-6656:*



ԳՐԱԿԱՆ

# ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆԻ «ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ»Ը
## (Յապաւումներով)

ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
(Տարունակուած «Մասիս»ի 9 Փետրուար 2008 թիւէն)

Հայեցի տոհմիկ աւանդութիւններու եւ բարքերու պատկերումով Մոռցուած հայեր գունագեղ գրութիւնը դիւցազներգական սրտայորդ շեշտերով լոյսին կը բերէ իրենց ազգային ինքնութեան պինդ կառչած պարսկահայ գիւղացիներուն առօրեայ կեանքը: Յետամնաց, աղքատ եւ աշխարհէն կտրուած, անոնք այսուհանդերձ կը մարմնաւորեն յարատեւելու, հայութիւնը անաղարտ պահելու եւ մեր ազգային միասնականութիւնը վերակերտելու վսեմ խորհուրդը:

Դառնութեան յատակին իսկ չտժգունող հայու մարդասիրութեան պատկերը կու տայ Դրոշմաթուղթի կաղանդը: Օտար ցուրտ աշխարհ մը, պարապ ստամոքս մը, անհեռանկար մութ ապագայ մը անկարող կ՚ըլլան ընկճել չքաւոր բայց անխաթար որբ հայ ուսանողի մեծ հոգին որ կը յամառի երջանկանալ իր նմանները երջանկացնելով: Իսկ Վարձու ուրախութիւնը կու տայ աշխատասիրութիւնը, հայրենաբաղձութիւնն ու ընտանեկան նուիրուածութիւնը ուղղամիտ համեստ սփիւռքահայուն:

Հատորին մէջ, հայու ճակատագրի խաղերը թերեւս ոչ մէկ տեղ այնքան բացայայտիչ երանգներով տրուած են որքան Ռոմացի մայրիկը գրութեամբ: Մռայլ է պատկերը – պճեղ մը անուշ սիրտով ու սեւ լաչակով իտալաբնակ հայ մայրիկը կու գայ Արեւելք՝ իր մէկ հատիկ զաւակին ու ընկերներուն ոսկորները գտնելու եւ նոյն պատանքին մէջ ամփոփելու համար:

Եւ վերջապէս, գիրքին տեսակ մը ինքնատիպ ամփոփումը կարելի է համարել Յիսուն տարի վերջը, ուր կայ եղեռնէն թերեւս աւելի դառն ողբերգութիւն մը: Այստեղ նկարագրուած է հեղինակին այցելութիւնը Մուսուլի հայոց եկեղեցին, ուր յիսուն տարի առաջ իր հայրը տմարդի վերաբերմունքի հանդիպած էր տեղւոյն առաջնորդ պարարտ քահանային կողմէ՝ երբ Ջարդերէն հազիւ ազատած, օգնութիւն խնդրելու եկած էր իր սովահար, ուժասպառ, մերկ ու հիւանդ ու վիրաւոր ազգակիցներուն համար, մահուան հոտով ծանրացած միջոցին եւ արեւին մէջ իրենց սիրելի աչքերը կեանքին փակող մայրերուն ու երեխաներուն համար: Ամենէն հեգնականը – եկեղեցիի բակին մէջ իր մահէն ետքն իսկ տիրապետող շքեղ դամբանը այդ նոյն քահանային:

.2.

Վահրամ Մավեանի արձակին մէջ տիրապետող է իրապաշտութիւնը – իրատեսութիւն մը որ կը զուգակցուի եւ կը հաւասարակշռուի համապատասխան հանդուրժողութեամբ: Զուսպ է ան մեր ե՛ւ դրականի, ե՛ւ բացասականի առարկայական գնահատման մէջ – զսպութեամբ գիտահետազօտողի մը որ ինքզինքին պարտադրած է որոշ պահերուն դառնալ դիտող, որպէսզի կարենայ անաչառօրէն տալ կեանքը իր անողոք մերկութեամբ եւ իրական գոյներով: Մեր ազգային սնապարծութեան արտայայտութիւններուն ու երեւոյթներուն հանդէպ ան կը ցուցաբերէ հասուն դատողութիւն մը որ ներթափանցուած է հասկցող ու բացատրող մարդկային մեղմ ժպիտով մը: Որպէս մէկ ներկայացուցիչը արդի սփիւռքահայ գիտակից, լուսամիտ եւ ազգային երիտասարդութեան, ան կը ձգտի խառնակ այլ բախտորոշ ներկային մէջ կենսագործել մեր անցեալի հոգեմտաւոր լաւագոյն աւանդութիւններուն վերարժեւորումը՝ կերտելու համար երիտասարդական ազդու հաւաքականութիւն մը որ գտնուի մեր գոյատեւման համար արդի պայմաններու պահանջած բարձրութեան վրայ: Արդիականութեան մտահոգութիւնը սակայն զինք երբեք չի հեռացներ հայկական զգալակերպի հարազատութենէն: Ան կը գուրգուրայ մեր ազգային ժառանգին հետ առնչուող ամէն մասունքի վրայ: Այս գուրգուրանքը ամենէն առաջ կ՚արտայայտուի մեր ժողովուրդին հանդէպ անսպառ սիրով: Բացառիկ խանդաղատանքով մը կը պատկերէ ան ամէն խաւի պարկեշտ հայերը, պարզ աշխատաւորները, բարի մամիկները եւ մանաւանդ հայու աղուոր աչուկներով մանուկները, մանուկները, մանուկները: Որպէս արտայայտութիւնը նոյն գուրգուրանքին, սփիւռքահայութեան ինքնուրոյն հոգեբանութիւնն ու մտածելակերպը ցայտուն կերպով ան կը դրսեւորէ տիպարներու, պատահարներու եւ վիճակներու պատկերման մէջ՝ միշտ վեր հանելով մեր ազգային նկարագրի էական գիծերը անոնց ընդմէջէն: Մեր հոգեկան նահանջի ամենազորչ բնորոշումներուն մէջ իսկ, ան չի մոռնար իսկական արժեչափով տալու թէկուզ վտիտ այն կայծը որ կը յամենայ մեռնող հոգիներուն յատակը: Մեր ազգային կեանքի ամենէն խրախուսիչ երեւոյթներու իսկ գնահատման մէջ, ան կը մերժէ տարուիլ չզատորոշող միագոյն ինքնագոհութեամբ:

Հաւասարակշռուած ու շրջահայեաց դատողութիւնը, մեր ազգային արժէքներու եւ արատներու իրապաշտ գիտակցութեան կողքին, կը բնորոշէ Մավեանի մտածողութիւնը: Իր մօտ գրեթէ միշտ կը տիրապետէ միտքը – ըլլայ նիւթի ընտրութեան մէջ, յլլայ դէպքերու իմաստի միջուկին բացայայտման մէջ, եւ ըլլայ անոնց տրամաբանական եզրայանգումին մէջ: Առանց անտեսելու բարդութիւնները, այսուհանդերձ ան կը խուսափի արուեստակեալ անտեղի խրթնաբանութենէ: Ընդհանրապէս կը պահէ կշռադատ չափը, եւ գեղարուեստական մշակման մէջ գրեթէ միշտ կը մնայ զուսպ:

Պատկերաւոր խօսքը, իր ժուժկալութեամբ եւ գողտրիկ թեթեւութեամբ, գլխաւոր յատկանիշներէն մէկն է Մավեանի արձակին: Այնքան զուսպ ու թափանցիկ են իր պատկերները, որ հազիւ կը նշմարուին ընթերցումի ատեն, եւ ուշադրութիւնը բնաւ չեն շեղեր ընթերցումի ընդհանուր միաձոյլ թափէն: Իրաւ գեղեցիկի անվիճելի առանձնայատկութիւն մըն է ասիկա: Խորտուբորտութեան ոչ մէկ զգացում կ՚ունենանք երբ կը կարդանք թէ՝ գիշերամուտին «Կեանքը լոյսերուն հետ կծկուեցաւ տուներէն ներս, վարագոյրներու ետեւ», կամ թէ՝ «Նաւը հետզհետէ ալիքներուն վրայ վերածուեցաւ հեռացող, մութին մէջ կորսուող աստղախումբի մը», եւ կամ երբ խումբ մը աղջնակներու «անտաշ անմեղ ձայնը՝ նոր ծագող ամչկոտ արեւի մը հետ ներս կ՚իյնայ բաց պատուհանէն»: Ոչ մէկ պոռոտութիւն, ոչինչ զգայացունց, այլ պարզապէս ջերմացնող ներկայութիւնը բանաստեղծական հարազատ ապրումի:

Իմ կարծիքով, այս հատորը կազմող գրութիւնները իրենց ստուար մեծամասնութեամբ պատմուածքներ են ըստ էութեան: Մանրամասնելով, քսան գրութիւններուն տասնըվեցը պատմուածքներ են՝ իրենց թերիներով հանդերձ: Մնացեալ չորսին երեքը – Քաղաքը որ կ՚ապրի իր մեռելներով, Մոռցուած հայեր, Յիսուն տարի վերջ – կը պատկանին պատմուածքի մօտեցող միջանկեալ սեռի մը՝ յուշագրական-ճանապարհորդագրական հակումով: Իսկ «Կարսի հայ հասարակութիւնից» գրութիւնը գեղարուեստական գրականութեան բնագաւառէն դուրս կը մնայ՝ որպէս պատմական ուսումնասիրութիւն:

«Հայու Բեկորներ»ու պատմուածքներուն բովանդակութիւնը կը պարունակէ ազգագրական եւ ժամանակագրական նախանիւթեր: Այս հանգամանքը ոչինչ կը փոխէ գրութիւններուն պատմուածքային հիմնական բնոյթէն: Պատմուածքներ ըլլալով հանդերձ, անոնք ի յայտ կը բերեն պատմուածքի դասական ըմբռնումէն զատորոշուող ձեւի ու կառոյցի կարգ մը առանձնայատկութիւններ:

Սկզբունքով, գրողին միջամտութիւնը անհաշտ է պատմուածքի կառոյցին հետ: Պէտք չէ մոռնալ, սակայն, թէ «Հայու Բեկորներ»ու հեղինակը իր պատմուածքներուն նկարագիրներէն մէկն է նոյն ատեն – ամենէն բազմակողմանին անկասկած, եւ յաջողագոյնը թերեւս: Հետեւաբար, իր խորհրդածութիւնները ձեւով մը գեղարուեստօրէն միաձուլուած են պատմուածքի ընդհանուր կառոյցին հետ ու չեն հանդիսանար կոպիտ միջամտութիւններ: Իր պատմուածքին գեղարուեստական ձեւը կեանքէն պայմանաւորուած յայտնագործութիւն մըն է՝ աւելի քան թեքնիք հնարք ու միջոց: Իր պատմուածքին եզրակացութիւնը ինքնաբերաբար կը յանգի լուսաւորող յայտնութեան՝ աւելի քան նախայղացուած տպաւորութեան: Այս ճանաչողական հետազօտութեան որպէս սատար, ան օժտուած է դիտողականութեամբ մը որ ունի նոյն դաշնաւորումը ինչպէս իր ազգային մշակութային ժառանգն ու զգալակերպը: Ու բոլորը միաձուլուած՝ այնպիսի համաչափութեամբ ու հարազատութեամբ, որ իր պատմուածքները բնաւ չեն ձգեր աշխատցուած ըլլալու տպաւորութիւնը – կարծէք բնակազմական հանդարտ ընթացքով, հարթավայրի մը վրայ ձեւ ու մարմին առած կազմութիւններ ըլլային անոնք՝ որոնք իրենց գոյութեան համար պարտական չեն որեւէ բռնազբօսիկ բիրտ վերիվայրումի, այլ լուռ վկաներն են բնական ուժերու դանդաղ, անդիմադրելի ներգործման:

***

Վահրամ Մավեանի «Հայու Բեկորներ» հատորը սփիւռքահայ գեղարուեստական արդի արձակի ամենաբեղուն որոնումներէն մէկուն յայտարարն է: Բեղուն՝ իր թարմ շունչով, նոր խօսքով եւ ինքնատիպ ձեւով:

1975-2008
33th ANNIVERSARY
Life, Health, Group Health
Disability, Long Term Care
NEW YORK LIFE

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻՐԱՄԱՆԹՕ
ՄԱՐՈՆԵԱՆ



818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

## ԿԱՐԾԻՔՆԵՐ

# ՄԵՐՕՐԵԱՅ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

*ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ*

*1993 թուին ինձ յաջողեց գնալ Հայաստան: Այն տարիներին սնունդի պակասը զգալի էր: Լոյս չկար, ջերմութիւն չկար: Երկիրը պատերազմի մէջ էր: Բոլոր առօրեայ սննդամթերքը, ուտելիքները, հագուստ եւ այլն առաքւում էին Արցախ: Ժողովուրդը խռնուած էր հայ թխատաների առաջ, հերթի էր սպասում: Ես էլ մտայ հերթի մէջ: Սպասում էինք հացի մեքենային, որ պիտի շուտով գար եւ հացը բաժանուէր: Շարքերի մէջ սպասում էինք: Խօսքի բռնուեցի մի քանի տեղաբնակների հետ: Իրենց ասացի որ Իրանից եմ: Մեզ մօտ էլ Իրան-Իրաք պատերազմի տարիներին հացի եւ միւս ուտելիքների համար ժամերով հերթի էինք կանգնում: Մտածում էի ինքս ինձ թէ որքան երջանիկ եմ որ քանի օրից պիտի վերադառնամ Իրան: Այնտեղ գոնէ հերթեր չկային այլեւս: 2006 թուին նորից որպէս թուրիստ մեկնեցի Հայաստան: Մեղրիի կամուրջի վրայով օրէկան հարիւրաւոր մեքենաներ էին անց ու դարձ անում: Մեքենաները սննդամթերք, շինարարական նիւթեր էին տանում Հայաստան: Մի խօսքով Հայաստանի տնտեսական վիճակը բաւական փոխուած էր եւ ամէն ինչ դէպի լաւն էր գնում: Այդ վիճակը ուրախացնում էր իւրաքանչիւր հայի: Անշուշտ թէ Հայրենիքում եւ թէ սփիւռքում ապրող հայերի մէջ դեռեւս կան այնպիսիներ, որոնք մէկ-մէկուն չեն հանդուրժում եւ վիրաւորական արտայայտութիւններ են կատարում:*

*Արիստակէս նոյնպէս կը վկայէ թէ, «երբ Հոռոմոց ինքնանկալը լսեց Հայոց Աշոտ թագաւորի մահուան լուրը, Անիին վերաբերող «կտակը» գտնելով ձեռնամուխ եղաւ Անի քաղաքի գրաւումին՝ իբրեւ իր սեփական ժառանգութիւնը»: Վասիլի յաջորդներէն՝ Կոստանդին Մոնոմախոս կայսր (1042-1055), վճռեց դաւադրաբար Գագիկ թագաւորը Կ. Պոլիս կանչել ուր ան մնաց ու հայրենիք չվերադարձաւ երբեք: Կայսերական մայրաքաղաքին մէջ Գագիկ խաբկանքի առարկայ դարձաւ երբ պատիւներ շռայլեցին իրեն որպէս «պատուաւոր աքսորեալ»: Իրեն Մագիստրոսի տիտղոսն ալ տուին, ինչպէս նաեւ հողային կալուածներ՝ Կապադովկիոյ մէջ: Մինչ այդ բիւզանդական զօրքեր Անի քաղաքը մտան ուր հանդիպեցան հայ ազնուական Գրիգոր Պահլաւունիի, որ ստիպուեցաւ իր տիրոյթները եւս յանձնել յոյներուն ու քաշուիլ Միջագետք:*

*Շար.ը էջ 19*






# ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԱՆ

**ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ**

*Հայոց «Արաց»ն (Յունուար ամիս) էր իր ճանապարհի երթի դրօշը փոխանցում Հայկ Նահապետի Մեհեկան ուստրին (Փետրուար ամիս), Երկիր մոլորակի արեւմտեան այս կողմն հասած հարիւր-հարիւր հայեր, Հայաստանեայց Առաքելական եկեղեցու առաջնորդարանի շէնքի աղօթատեղում ոտքի կանգնած, լուռ ունկնդրում էին պատարագի արարողութիւնը, տիեզերական իմաստութեամբ յօրդած հայոց վարդապետների շարականները: Նայում էի չորս դիս, նրանց դէմքերից խոհ էր ճառագում, երեւի այն իրենց երկրի կարօտի, իրենց վարդապետների շարականների ոգու արթնած շողերն էին: Այդ օրը նրանք չէին եկել իրենց հաւատքի վարդապետի փառաբանման պատարագին, չէ, նրանք եկել էին իրենց Վարդանի, նրա հետ ընկած, նրա հետ պատերազմած քաջորդիների 1557 տարիների տարելիցին, նրանց յաւերժութեան ճանապարհի անմահութեանը աղօթելու: Այդ օրը հայոց վարդապետների անուշ շարականները շոյում էին հոգիս, Վարդանի քաջութեան, նրա հայկեան ոգու լոյսն էր անձրեւում այնտեղ, գարուն զեփիւռն էր հովում այնտեղ: Կարմիր Վարդան, այդ կարմիրը նրա հոսած արիւնը չէ, այդ կարմիրը ոգի է, կարմիրը նրա վառած մարտի քաջութեան բոցն է, կարմիրը նրա հայրենեաց հրաբխացած ոգու պայթող կրակի խարոյկն է:*

*Մարել էր տոհմը հայրենապաշտ Հայկազուն Արտաշէսեանների, պարթեւներն էին տիրում հայոց աշխարհի «Հայք»երին, որոնց բանակները ահեղ երկու ճակատամարտերում ջախջախել էր արեւելքի հայրենապաշտ Արքայից Արքայ Հայկազուն Տիգրանը: Պարթեւների արքան, որպէսզի անխռով իշխէր իր երկրում քսան վեց տարբեր ցեղախմբերից կազմուած Աղուանք աշխարհում թագաւորել էր եղբօրը, Հռովմի հետ կնքած դաշնագրի համաձայն միւս եղբօրն էլ հայոց աշխարհի թագաւոր, կայսրը նրանք թագադրելու պայմանով: Տրդատ էր անունը նրա, թուականն էր 66 ք.ե., Հռովմի կայսր Ներոնը՝ ի նշան խաղաղութեան իր պալատի բոլոր դռներն էր բացել նրա առաջ եւ հանդիսաւորութեամբ թագադրել որպէս դաշնակից Հայաստանի Տրդատ Ա. թագաւոր: Արշակունիներ կոչեցին հայոց գահին թագադրող այդ տոհմը, որոնք հայացան, որոնք 400 տարիներ հայոց աշխարհի մեհեաններում Նաւասարդ տօնախմբեցին, հայոց սրբազան լեռնաշխարհի հողի համար պատերազմեցին, հայոց հողը նրանց հոգիներին քաջութեան ոգի յորդեց: Պատերազմեցին նոյնիսկ ցեղակից երկիր Պարթեւաստանի բանակների դէմ, յաղթական կատաղի ճակատամարտեր մղեցին իրենց տոհմը գահազրկած Սասանեանների դէմ: Հայոց երկրի ինքնուրոյն իշխանութիւնը երկու հակամարտ հզօր կայսրութիւնների ազդեցութիւնից զերծ պահելու համար, իրենց նախնիների տոհմական հաւաքի բարեպաշտ աստուածների խորհուրդից յորդած, արեւելքում ծագած տիեզերական նոր լոյսի ջահերը բոցավառեցին հայոց սրբազան լեռնաշխարհում, իրենց նախնիների Տիր աստուծոյ վառած գրի, բանաստեղծութեան կանթեղների լոյսը դարձեալ արեւեցին հայոց աշխարհի վրայ, Մուսասիր-Մուշի մեհեանի ներշնչանքով արարած սքանչակերտ սիւնազարդ տաճարներում իրենց հոգիներին բարու լոյսի անձրեւ տեղաց:*

*Հայոց Արշակունիների տոհմի վերջին արքան, մշակութասէր, առաքինի Վռամշապուհ արքայի որդի՝ Արտաշէս-Արտաշիրը, զուարճասէր, զեխ կեանք վարող ու անպատերազմիկ թագաւոր էր եղել: Հայոց նախարարներ չէին հանդուրժել նրան, գնացել էին Սասանեան Տիզպոն, օտար արքային յայտարարելու որ իրենք թագաւոր չէին ուզում եւ որ ինք իշխէր հայոց երկրին: Իմաստուն հայ, դու ինչու անթագաւոր դարձրիր քու երկիրը, գայլին բերիր քու երկիր որ յօշոտէր այն: Գահընկեց անէին նրան, քու ազգի ոգին իր սրտում որպէս հրագունդ չվառող թագաւորի փոխարէն, քու հայկազուն քաջ նախարարներից մէկին թագադրէին: Հայ, իմացիր քու պատմութեան ամենաողբերգական պահն է եղել այդ:*

*Օտար արքան առանց պատերազմի նուաճեց հայոց սրբազան լեռնաշխարհը, այնտեղ կառավարիչ-մարզպան կարգեց Սիւնեաց աշխարհի իշխան Վասակ Սիւնեցուն: Կորիւն անունով աշակերտը իր ուսուցչապետ Մաշտոցի մասին յօրինած «Վարք»ում պիտի գրէր. «Այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիքի իշխանութեան գլուխ անցաւ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածային իմաստութեան շնորհքով օժտուած մի մարդ: Նա շատ նպաստեց աւետարանի քարոզչութեան գործին»:*

*Չկար հայոց զօրք, չկար հայոց բանակ, չկար թագաւոր: Ով էր իրենց Հայկ Նահապետի ժառանգ թողած հողը պաշտպանելու, որտեղ իրենց նախնիների արարման հեւքն ու քրտինքն էր ծորել, որտեղ մղուած պաշտպանական կռիւներում իրենց որդիների արիւնն էր հոսել, որտեղ հայոց այրուձին Հռովմի լէգէոնների վաշտերն էր խորտակել: Սասանեանների լպիրշ արքան՝ Յազկերտ, հրամայել էր հայոց երկրում պաշտեն այն աստուածները, որ ինքն էր պաշտում: Իր աշխարհի տոհմական «Տիեզերական» բարեպաշտ աստուածների հաւատքը այրած հայն, հեռու երկրից եկած օտար Վարդապետի հաւատքի լոյսի խորհուրդը ամուր գամել էր սրտին, դարերի ընթացքում այն դարձել ծին: Տիեզերական սքանչանքով պատած տաճարներում աղօթեցին իրենց նոր Վարդապետի լոյսին, յոյսին, հաւատքին: Աղօթեցին արդեօք իրենց ազգի յաւերժութեան, իրենց Նահապետի, իրենց թագաւորների ու հայրենեաց սրբազան հողի անսասանութեանը, ինչու մարեցին Արրատայի, Հայասայի, Արմիայի իրենց նախնիների բարեպաշտ հին աստուածների ուժի, իմաստութեան, մայրութեան, պատերազմի խորհուրդը: Տանուլ տուին, խաչուեցին, խաչուեց երկիրն իրենց:*

*Առանց թագաւորի, առանց բանակի մնացած երկիրը ընդամէնը քսան երեք տարիներ ետք գոյամարտի ճակատամարտ պիտի մղէր՝ 451 թուականի հէքիաթային գարնան Մայիս ամսին: Այն հերոսամարտ չէր, հերոսամարտեր պիտի մղէին իրենց աշխարհի Սասունի լեռներում, Զէյթունի ու Մուսա Լերան լեռների բարձունքներում, Արարատեան դաշտում, Պաշ Ապարանում, իրենց արեւելեան կողմն Արցախ աշխարհում: Մամիկոնէից Վահանն էր 481-484 թուականներին, զօրավարի ռազմագիտութեամբ հերոսամարտեր մղեց, Նուարսակի դաշնագրով ստիպել պարսիկին ճանչնալու իր հաւատքի ազատութիւնը, երկիրը կառավարելու արդարութեամբ, չգործակցելու ամբարիշտ իշխանների հետ:*

*Հայոց աշխարհի հոգեւոր հովիւները իրենց արքաների Արտաշատ մայրաքաղաքում, ժողով գումարեցին, չկար ազգի հովիւ թագաւորը որ ինք պատասխան գրէր, որ զօրքը կռուի տանէր, ափսոս քեզ հայոց երկիր: Եւ հոգեւոր հայրերը նամակ գրեցին առ օտար թագաւոր՝*

*«... Մեր ամբողջ մարմինը քու ձեռքը տուած արա շուտով ինչ որ կամենում ես:... քու սուրը եւ մեր պարանոցը... այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ հուրը»: Այդ ինչպէս էր որ իրենց հոգիներում հանգել էր իրենց նահապետի ոգին, իրենց նախնիների հայկազուն քաջերի զէնքերի շաչիւնը: Ինչու ոչ պարանոցի փոխարէն նրա դիմաց սուր չէին ճօճել:*

*Զայրացել էր պարսից արքան, հայոց նախարարներին չտալով արքունիք: Սարկացած հոգով, յանգած ոգով նախարարներ, թողած իրենց տներ, թողած իրենց զօրք, գնում էին Տիզպոն արքային ներկայանալու: Դուք՝ Արրատայի, Հայասայի, Արմիայի արիական հայկազուն իշխանների յետնորդներ, ինչու ձեր այրուձին, ձեր սպառազէն զօրքը գլխաւորած չգնացիք հայոց երկրի սահմաններ, կռուի կանչելու թագաւորին, ինչպէս արել էին ձեր Արշակունի արքաներ, ափսոս, այդ ինչպէս եղաւ: Նախկինի նման ոչ մէկին արքայական դիմաւորում չէին կազմակերպել: Խիստ էր զայրացած արքան, սպառնացել էր արեգակի կրակով պատժել նախարարներին: Հրամայել էր պաշտել այն աստծուն որ ինքն էր պաշտում, իրենց կրած Աստուծու նշանը այրել արեւի աստուծոյ ատրուշանում, որ նրա կրակով այրուէր իրենց հաւատքի ոգին: Նախարարները մերժել էին ուրանալ իրենց հաւատքը, մերժել էին երկրպագել կրակին, բանտ էին առաջնորդուել:*

*Յաջորդ առաւօտեան, երբ արեգակն իր կրակ ժպիտով արեւագալն էր աւետում, լոյս փռում Տիզպոնի վրայ, նախարարները արքայի հետ երկրպագում էին արեւին: Արքան էր հրճւում, իր հպատակները պիտի պաշտէին այն աստծուն որ ինքն էր պաշտում: Ինչ իմանար, որ հայոց նախարարները առերես էին ուրացել, որ նրանք մտօք երկրպագում էին իրենց Աստծուն, որ երկիր իրենց վերադարձի ճանապարհին լոյս փռէր:*

*Հայ նախարարների հետ հարիւրաւոր մոգեր, պարսից զօրքի հետ հատեցին հայոց սահմանը: Ընդվզեց հայն, որդին հօր դէմ, կինը ամուսնու դէմ կռուի ելան, քարկոծեցին, անարգեցին ուրացող նախարարներին, սպաննեցին մոգերին: Նոր հաւատքը հայոց աշխարհին, հայոց սրտերին որպէս ոգեղէն հուր էր հոսել, պոռթկում էր հայոց աշխարհը, չկար թագաւոր որ նրան մարտի տանէր: Նենգ պարսիկը հայոց նոր հաւատքից յառնած ոգին էր սպանում, որ կոչեր հայոց աշխարհին: Հանդարտեց երկիրը, նախարարները առերես էին ուրացել, որ վերադառնային երկիր, որ աշխարհում հաւատքի առաջին ճակատամարտը մղէին: Ինչու միայն հաւատքի պատերազմ եւ ինչու ոչ իրենց երկրի ազատագրութեան նոր թագաւորի գլխաւորած պատերազմ:*




Թէքէեան Մշակութային Միութեան
Լոս Անճելըսի Մասնաճիւղ

**ՅԱԿՈԲ ՊՈՂՈՍԵԱՆԻ**
**«ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ»**

**Գիրքի Ներկայացում**

Ելոյթ կ'ունենան՝
**ՓՐՈՖ. ՕՇԻՆ ՔԷՇԻՇԵԱՆ** *(Գիրքի մեկնաբանութիւն)*
**ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ** *(Խմբագրի խօսքը)*

**Վկայութիւններ**

*Գեղարուեստական բաժին*
**ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆ**
**ԱՆԱՀԻՏ ՆԵՐՍԻՍԵԱՆ**
**ԼԵՒՈՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**

Հանդիսավար՝ **ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ**

**Կիրակի, Փետրուար 24, 2008 - Կ.Ե. 6:00**
Կլենտէյլի Կեդրոնական Գրադարան
222 E. Harvard, Glendale

**ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

## Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ
# «ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

*ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ*

*Պատահական չէր, որ Սրբոց Վարդանանց Տօնին ներկայացուեցաւ «Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութիւն» գիրքը:*

*Պատահական չէր, որ Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողովի Տօնի շաբաթը ներկայացուեցաւ «Հայր Մեր»ի փոքրիկ գրպանի գիրքը... եւ պատահական չէր, որ Մեծ Պահքի սեմին ներկայացուեցաւ Տիրոջ սորվեցուցած աղօթքը:*

*Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ կողմէ սրբացած մեր Սուրբ Հայրերու եւ հերոսներու փաղանգը, որոնք իրենց հոգին անդամագրեցին նուիթեղէնէն վեր «Վասն Յիսուսի, Վասն Հայրենեաց» վսեմ գաղափարին, իրենց կեանքով ու արիւնով Հայ Հոգիին Յաղթանակը արձանագրեցին պատմութեան արիւնոտ էջերուն վրայ:*

*Զաւակներն էին Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ... որոնց հոգին չթունաւորուեցաւ երբեք շառաւիղներէն Բաբելոնի եւ սնահաւատութեան Ջրհորէն՝ Յազկերտի:*

*Զաւակներն էին Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ... որոնք անտեսեցին մարդուն հոգին կլանող նիւթը՝ փառքն ու պատիւը... եւ հաստատ մնացին իրենց Ուղղափառ Հաւատքին վրայ, իրենց աչքերը յառած՝ Գողգոթայի Ջահին:*

*Զաւակներն էին Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ... որոնք Ուղղափառ Հաւատքի Կենաց Լոյսով լուսաւորեցին ճամբան գալիք սերունդներուն... յիշեցնելով խօսքը Փրկչին՝ «Ես եմ լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց»:*

*Ըսինք... պատահական չէր որ Սրբոց Վարդանանց Տօնին ներկայացուեցաւ «Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութիւն» գիրքը:*

*Զչարունակենք...*

*Հինգշաբթի, Յունուար 31ին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանը կը յորդէր խուռներամ հաւատացեալ ժողովուրդով, դուք հասկցէք ուխտաւորներով, որոնք եկած էին Լոս Անճելոսի բոլոր շրջաններէն Վարդանանցի Ուղղափառ Հաւատքի լոյսով վառելու պատրոյգը իրենց հոգիի կանթեղին...*

*Եկած էին Վարդանանցի Խորհուրդով հաղորդուելու... եւ վերջապէս եկած էին Տիրոջ սորվեցուցած՝ Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութեան ունկնդիր ըլլալու, ընկալելու, ըմբռնելու... ըմբոշխնելու...:*

*Առաջնորդարանի մեծ դահլիճի մէջ Սուրբ Պատարագը մատոյց՝ Ս. Յակոբ Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեանը:*

*Ապա «Գալայճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Վարդանանց Տօնակատարութիւնը եւ «Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութիւն» գիրքի ներկայացումը:*

*Նուիթապաշտութեան այս օրերուն... որքա՜ն ուրախալի էր տեսնել հարիւրաւոր հայորդիներու ներկայութիւնը Վարդանանցի կրօնական եւ ազգային այս տօնին, որոնք եկած էին իրենց հոգին բանալու Կենաց Լոյսին... կտոր մը երկինքով իրենց միտքը ակօսելու:*

*Որովհետեւ... «Սիրել լոյսը, փնտռել զայն, վստահիլ անոր՝ խաւարը հալածել է, զի լոյսը նոյնինքն Քրիստոս է, աշխարհի խաւարին մէջ անշէջ կոթողուած» կ՚ըսէ Սուրբ Գրիգոր Նարեկացին:*

*Հանդիսութեան կը նախագահէ Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը:*

*Ձեռնարկը սկսաւ ներկաներու Տէրունական Աղօթքով:*

*Համայնքիս սիրուած ազգայիններէն՝ Բարսեղ Գարթալեանի ողջոյնի խօսքով սկսաւ յայտագիրը: Ան իր բացման խօսքին մէջ անդրադառնալէ ետք օրուայ Խորհուրդին՝ ընթացք տուաւ յայտագրին:*

*Այսպէս, գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցան արհեստավարժ արուեստագէտներ... ասմունքով՝ Սեդա Հայրիեան, «Աղօթք Վասն Հայ Եկեղեցւոյ», երգով՝ Մաննիկ Մանուկեան «Հայ Եկեղեցին», դաշնակի ընկերակցութեամբ, փրոֆ. Լեւոն Աբրահամեանի, ասմունքով, Գրիգոր Օզարեան «Խորհուրդ Վարդանանց» եւ «Վարդանանք»:*

*Արեւմտեան Թեմի Քահանայից Դասի եւ ժողովուրդի մասնակցութեամբ երգուեցան «Նորահրաշ Պսակաւոր» շարականը եւ «Թէ Հայրենեաց Պսակադիր» երգը, ղեկավարութեամբ՝ Արժ. Տ. Նարեկ Աւ. Քհնյ. Մատարեանի:*

*Հոգեզմայլ երգեր... ուր ներկաները անգամ մը եւս կը հաղորդուէին Վարդանանց Նահատակներու Ուղղափառ Հաւատքով, գիտակցելով որ Շաւարշանի վրայ թափուած արիւնը չկորսուեցաւ լոկ երկրի վրայ, այլ Հայ Կեանքի Ջահը հանդիսացաւ լուսաւորելով ճամբան բոլոր սերունդներուն:*

*Հարկ կա՞յ ըսելու որ այդ Ջահը վառուած էր Կենաց Լոյսով: Այն միակ աղօթքով որ մեր Տէրը սորվեցուց մեզի:*

*Ահա թէ ինչու «Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութիւն»ը նուէթ կը դառնար այդ իրիկուն, հայ հաւատացեալին աւելի մօտ բերելով Կենաց Լոյսին, Կենաց Բանին, Կենդանի Ջուրին:*

*Հանդիսավար Բարսեղ Գարթալեան յաւելեալ լուսաբանութիւններ տալով աղօթագիրքին մասին ըսաւ. «Այս գրքոյկը արդիւնքն է Լոս Անճելոսի Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Սուրբ Գիրքի սերտողութիւններուն, զոր սիրայօժար կերպով կը վարէ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Բրշ. Տօքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեան:*

*Գիրքը աշխատասիրած եւ խմբագրած է Նահապետ Մելքոնեան:*

*Այս գիրքը լոյս տեսաւ 6000 տպաքանակով եւ կ՚առաքուի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ բոլոր Նուիրապետական Աթոռներուն եւ Թեմերուն ի սփիւռս աշխարհի:*

*Գիրքը շուտով պիտի թարգմանուի անգլերէնի, ֆրանսերէնի եւ ռուսերէնի:*

*Ապա ան բեմ հրաւիրեց օրուան բանախօսը՝ Բրշ. Տօքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեանը՝ որ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Ուղղափառ հաւատքի հմուտ մեկնաբաններէն է:*

*Ան միաժամանակ Հայաստանի «Գանձասար» Աստուածաբանական Կեդրոնի եւ «Վէմ» 24-ամեայ ռատիօհաղորդաժամի հոգաբարձութեանց անդամ է:*

*Բանախօսը իր ճարտար եւ ուղղափառ հաւատքի հմուտ մեկնաբանութեամբ առաջին իսկ վայրկեանէն մագնիսացուցած էր հոծ բազմութեան ուշադրութիւնը: Ան շեշտեց, որ Տէրունական Աղօթքի Ուղղափառ այս Մեկնութիւնը հիմնուած է մեր Սուրբ Հայրերու՝ Եղիշէ Պատմիչի, Յովհան Ոսկեբերանի, Տէրտուղիանոս Հայրապետի, Որոգինէսի, Օգոստինոս Երանելի հոգեւոր գրականութեան վրայ, առաւելապէս Եղիշէ Պատմիչի որ կենդանի վկան եղած էր Վարդանանց հաւատքին:*

*Տօքթ. Մեսրոպեան արհեստավարժ բանախօսի մը կատարողութեամբ ո՛չ միայն ժողովուրդին կարողացաւ հասկնալի դարձնել «Հայր Մեր»ի ուղղափառ մեկնաբանութիւնը, այլ ներկաներուն իսկ վկայութեամբ, ուղղափառ հաւատքով բոցավառեց անոնց հոգին:*

*Իր խօսքերը, իր մէջբերումները Ուղղափառ Հայրերէն, Սուրբ Մեսրոպի աղօթքէն, Սուրբ Գիրգոր Տաթեւացիէն, Ս. Յովհան Ոսկեբերանէն, Եղիշէ Պատմիչէն սերմերու պէս կ՚իյնային հաւատացեալներու հոգիներուն մէջ... որոնք բացուած ակօսներու նման, պատրաստ էին ընդունելու Տիրոջ սորվեցուցած ուղղափառ հաւատքի մեկնութիւնը:*

*Խօսելով հաւատքի մասին, ան յիշեց Ս. Գրիգոր Լուսաւորչի մեկնութիւնը, թէ «Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերուն համար»:*

*Ապա ան շեշտեց թէ ամէն բանէ առաջ, Հայ Ուղղափառ Քրիստոնեան հարկ է որ ըմբռնէ՛, հասկնայ փրկագործութեան տնօրէնութիւնը թէ, ինչ որ է, Տէրը բնութեամբ, մենք Ս. Եկեղեցւոյ անդամներս կը դառնանք որդեգրութեամբ»:*

*Իսկ թէ ինչո՞ւ Հայր կ՚ըսենք երկնաւոր Հօրը...:*

*«Աստուած մեզի պատիւ ըրաւ որ մենք Իրեն Հայր կոչենք: Եղիշէ Պատմիչ կ՚ըսէ. Աստուծոյ Հայր ըլլալը մարդոց համար, բոլոր տրուած պարգեւներէն աւելի մեծ է: Աստուծոյ Հայ կոչելու իշխանութիւնը չունին հրեշտակները, հակառակ անոր որ անոնք հզօր են եւ հոգեւոր, սակայն սպասաւորներ են եւ ոչ՛ որդիներ» ըսաւ ան:*

*Ու այսպէս մաս առ մաս ան մեկնաբանեց Տէրունական Աղօթքը՝ ժողովուրդին փոխանցելով իր Սուրբ Հայրերու հոգեւոր գրականութիւնը, որ աւա՜ղ անտեղեակ է այսօր հայ հասարակութիւնը:*

*Ժողովուրդը ջերմ ծափահարութիւններով ողջունեց սիրելի բանախօսին հրաշալի մեկնութիւնն ու կատարողութիւնը:*

*Շար.ը էջ 19*



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance *by BC Life & Health Insurance Company*
- HSA-Compatible Plans *by BC Life & Health Insurance Company*
- Integrated Workers' Compensation *by Employers Compensation Insurance Company*

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.℠

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

# ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԷԼԼԱԴԱ ՔԱՂԱՔԻ «ՖԻՔՍ»Ի ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

ԾԱՆՕԹ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ներկայ յօդուածը կը վերաբերի եղեռնէն հրաշքով փրկուած հայ գաղթականներուն մասին:

Խօսքը յունահայ գաղութի մասին է, որ քառորդ դար գոյատեւեց հիւրընկալ էլլադայի մայրաքաղաքի մէջ: Նշենք այստեղ որ մինչ այսօր մեր ազգային շրջանակներէն ներս, անծանօթ անուն կը մնայ այս հետաքրքիր գաղութը:

Օգտակար ուսումնասիրութիւն մը որ հետաքրքրական է երիտասարդութեանը, որ կը ծանօթանայ այս գաղութի նիստ ու կացին, առօրեային, սովորութիւններուն, հոն ապրած ազնիւ ու աշխատասէր մարդոց կեանքին, որոնց բախտակից եղան յոյն ժողովուրդի հետ եւ միասին գործեցին այս երկրի տնտեսական եւ ընկերային կեանքին:

***ՆՇԱՆ ՃԻԳՆԵՅԵԱՆ***
***ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՅՈՒՆԱՍՏԱՆԻՑ***

*1915-1916 թթ. Երիտթուրքերի կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով, արեւմտահայաստանը կանգնեց ոչնչացման վտանգի տակ: Նիւթական հսկայական կորստի հետ, կորցրեց իր հայրենիքը, տալով մէկուկէս միլիոնից աւելի անմեղ զոհեր:*

*Զնայած Մեծ Եղեռնը նշւում է 1915 Ապրիլի 24ին, չարագործութինը դեռ ծրագրած է եղել աւելի շուտ, 1914 թ. Յունիս-Յուլիս ամիսներից, երբ մասսայական զինակոչ յայտարարելով, տղամարդկանց վերցրել են բանակ (առանց զէնք կրելու իրաւունքի):*

*Սա երիտթուրքերի նենգ-խորամանկ քայլն էր, ժողովրդին անպաշտպան թողնելու համար:*

*Հայերի, յոյների, եւ այլ էթնիկ խմբերի դէմ թուրքերի կողմից իրականացուած բնաջնջման քաղաքականութիւնը աւելի ակտիւացաւ հանրապետական թուրքիայի իշխանութեան ժամանակ:*

*1921-22 թթ. թուրք-յունական պատերազմի ժամանակ, յոյները պարտութիւն կրեցին:*

*Քեմալական բանակը կասեցրեց յոյների յաղթական արշաւը դէպի Անքարա:*

*Զաքարիա գետի հովտում կայացած ճակատամարտում, յոյները սկսեցին նահանջել:*

*Այսպիսով, քրիստոնեայ ժողովուրդները պէտք է դուրս գային Թուրքիայից, մնալը վտանգաւոր էր, Մուսթաֆա Քեմալը որոշել էր երկիրը վերջնականապէս մաքրել «անհաւատ» ժողովուրդներից:*

*1922 թ. Սեպտեմբերին թուրքերը աւերում, հրկիզում են Իզմիր քաղաքը:*

*Յոյները հայերի հետ միասին, յոյն զինուորների ուղեկցութեամբ, անցնում են Յունաստան:*

*Կիլիկիայից, Անատոլիայից, գաղթական հայերը, տարբեր ուղղութիւններով, դուրս են գալիս իրենց պապական օճախներից եւ վերաբնակւում տարբեր երկրներում:*

*Էլլադան գրկաբաց է ընդունում հայ գաղթականներին: Նրանք հիմնականում հաստատւում են Սելանիք, Դրամա, Քավալա, Սերեզ եւ մայրաքաղաք՝ Աթէնք քաղաքներում:*

*Յունական կառավարութիւնը, Աթէնքի «Ֆիքս» գերմանական փաբրիքայի շրջապատի ազատ տարածութիւնը տրամադրում է հայ եւ յոյն գաղթականներին: Թւով 10-20 հազար գաղթականներ տեղաւորւում են այնտեղ:*

*Այդ փաբրիքայի անունով թաղը կոչւում են «Ֆիքս»: «Ֆիքս»ը իր գոյութեան առաջին օրուանից ունեցել է եկեղեցի, թաղային խորհուրդ եւ հոգեւոր հովիւ, որոնք ջանացել են օգտակար լինել ժողովրդին:*

*«Ֆիքս»ը կոչւում էր նաեւ «Տուրղութի» իսկ Ատանայի թրքախօս հայերը «Տոնուզ Տամը» էին ասում, որ խոզաբուծարան է նշանակում:*



**Ֆիխի գաղթականական սկզբնական տարիներուն, 1922**

*Այստեղ յոյները ժամանակին խոզեր են արածել: Գաղթականները իրենց հնարաւորութեան սահման ներում, կառուցում են փոքրիկ փայտաշէն թիթեղածածկ խրճիթներ, եկեղեցի, ազգային վարժարան:*

*1922 թ. յունահայ թեմակալ Առաջնորդ Տ. Կարապետ Ս. Արքեպս. Մազլըմեանի օծումով, նորակառոյց եկեղեցին ի պատիւ Մշոյ Սուլթան Ս. Կարապետ եկեղեցւոյ, եւ անձամբ մշեցի սրբազան հօր, կոչւում են «Ֆիքս»ի Ս. Կարապետ եկեղեցի:*

*Եկեղեցին ունեցել է դպրոց, մանկապարտէզ, աշակերտութեան գրօսանքի բակ, հայ արիներու հաւաքատեղ, եւայլն:*

*Շինարարական աշխատանքների ժամանակ, եկեղեցին չեն կարողանում պահել (արտօնագիր չի լինում) եւ 1969 թ. քանդւում է:*

*Այս եկեղեցում 1943 թ. Սրբազան Մազլըմեանի ձեռամբ տեղի է ունեցել Վազգէ Ա. Կաթողիկոսի քահանական օծումը:*



**Ֆիխի պատմական Ս. Կարապետ հնաշէն եկեղեցւոյ ներքնամասը եւ խորանը, 1922**

*Եկեղեցին ունեցել է Տիկնանց Մարմին, ժրաջան եւ նուիրեալ տիկիններից կազմուած:*

*Հիւղակներից էր բաղկացած «Ֆիքս»ի գաղթօճախը, նեղ ու մութ արահետներով, կողք կողքի փոքրիկ ու փլփլուած խրճիթներով:*

*Ֆիքսեցիները ապրում էին խաղաղ, համերաշխ, ուրախ, հայկական աւանդական սովորութիւններով: Ընթրիքը կամ ճաշը ընտանեօք անցկացնում էին սենեակի մէջտեղը գետեղուած ցածկեկ «սուփրայի» շուրջը, ծնկածալ, իսկ գիշերը նոյն սենեակը ամբողջութեամբ անկողիններով էր ծածկւում: Այստեղ հայերը եւ յոյները իրար հետ խօսում էին թրքերէն:*

*Բացի ազգային վարժարնից թաղում կար կաթոլիկական եկեղեցի եւ ժողովարան:*

*Իւրայատուկ էր գաղթականների կոլորիտը, հումորը, անպակաս էր նրանց կենցաղից, շատ էին սիրում կատակներ անել, սրախօսել, անեկտոտներ պատմել:*

*Եղեռնից «խփնուած» անվանս ու բարի ֆիքսեցիներ՝ Կամաւորը, Վարդեվարը, Կիւտուկ Խորէնը, յոյն «Միստիրիոն», Թոփալ Հայկանուշը եւ ուրիշներ, իրենց իւրայատուկ կատակներով ու հետաքրքիր զրոյցներով, զուարճացնում էին յուսահատ գաղթականներին:*

*Թաղը ունէր իր հսկայական շուկան, բազմաթիւ խանութներով, որ ձգւում էր մի երկար փողոցի ուղղութեամբ, հասնելով համարեա քաղաքի գլխաւոր մայրուղին՝ (Սինգրու):*

*Երեկոները, յոգնած, աշխատանքից յետոյ, ֆիքսեցիները իրենց հանգիստը անցկացնում էին թաղի սրճարաններում, որտեղ զրուցում էին հին ու նոր հարցերի շուրջ, յիշում իրենց անցած, երազ դարձած, լաւ օրերը:*

*Մարդաշատ էր լինում Անրէասի եւ «Կիւտուկ Աւետիսի» սրճարանները, որտեղ, իրենց գեղեցիկ ձայնով ու նուագող ժողովրդին ուրախացնում էին «Քեազիմ»ը եւ «Բիւբուլը»:*

*Շար.ը էջ 17*

Հայկական Պարի
Դասընթացքներ



Տեղի պիտի ունենայ ամէն Շաբաթ
կեսօրէ ետք ժամը 3:00էն
մինչեւ ժամը 5:00

Ղեկավարութեամբ Պարուսոյց՝
Օր. Ալին Պօղարեանի

Անոնք որ հետաքրքրուած են եւ կ'ուզեն մաս կազմել
կրնան անձամբ ներկայանալ ամէն Շաբաթ օրերը,
կամ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ (626) 398-0506
Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena

# ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԷԼԼԱԴԱ ՔԱՂԱՔԻ «ՖԻՔՍ»Ի ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

*Շարունակուած էջ 16-էն*

«Կիւտիւկ Աւետիսը» հաճընցի գաճաճ մարդ էր, աթոռին նստելիս ոտքերը գետին չէին հասնում, հարուստ էր, պատերազմի ժամանակ սպաննեցին:

Աթէնքի ամենայայտնի անուշավաճառները եղբայրներ՝ Կարապետ եւ Սողոմոն Թաքէսեաններն էին: Թաքեսեանները իմ մօրեղբայներն էին, գաղթել էին Կուլինա, Քիւթահիա քաղաքից (Կոմիտասի ծննդավայրն է): Յոյները անուշեղէն շատ են սիրում, եղբայրները, որոնց «Մերակլի» էին կոչում, մեծ համբաւ ունեցան Աթէնքում: Արաղացը եւ փուռերը հաճընցի Ոգեանների տնօրէնութեան տակ էր:

1921 թ. Կիլիկիայի դատարկումից յետոյ, մեծ թւով հաճընցիներ ապաստան են գտնում Աթէնք: «Ֆիքս»ի եւ «Քոքինեիայի» մէջ ապրել են 2000-է աւելի հաճընցիներ, որոնց հետ նաեւ հերոս հրամանտար՝ Արամ Կայծակը:

Այս հերոսի հեղինակութիւնը թէ յունական եւ թէ հայկական շրջանակներում շատ մեծ էր:

Արամ Կայծակը Զմիւռնիայի (Իզմիր) կռիւներին Հելլէն բանակի կողքին, հազարապետի կռուել է Քեմալի դէմ:

Յետագայում նա հաստատուում է «Ֆիքս», ուր նուիրումով ծառայում է իր ժողովրդին: Արամը 1944 թ. Օգոստոսի դաւադիրների կողմից զոհւում է Հիւսիսային Յունաստանում:

Գեղեցիկ էր Աթէնքի ծովափը, Էգէեան ծովը աշխարհի ամենագեղեցիկ, ամենամաքուր ծովերից է, շրջապատուած գեղեցիկ անտառներով ու ցիտրուսային ծառերով:

Կառավարութիւնը թաղին կից՝ մանկական այգում, կառուցել էր մի հսկայական լողաւազան, երեխաների հմար, որ ջուրը անմիջապէս լցւում էր ծովից:

Զուարճալի էր նաեւ թաղից ոչ հեռու գտնուող՝ թագաւորական այգին (Զափիոն) որտեղ գործում էր ժամանակից կինոթատրոն՝ ամառային եւ փակ դահլիճներով:

Այգին շատ գեղեցիկ էր, հնաւուրց ծառերով, գոյնզգոյն ծաղիկներով, շատրուաններով, փոքրիկ լճակով, որտեղ լողում էին զանազան կարապներ: Կային նաեւ արգելափակուած կենդանիներ:

«Ֆիքս»ի սկաուտական խմբերի հաւաքատեղը կաթոլիկների դպրոցի բակն էր:

Գաղութը ունէր երկու խումբ՝ ա) թիւ 23րդ Աթէնքի սկաուտական խումբ, խմբապետ՝ Լեւոն Գայեան: բ) թիւ 56րդ Աթէնքի սկաուտական խումբ՝ խմբապետ՝ Պօղոս Պօղոսեան:

Այս կազմակերպութիւնները մեծ ազգօգուտ աշխատանք էին կատարում մատաղ սերնդին ազգային ոգով դաստիարակելու համար:

Գաղութը նաեւ ունէր ազգային ֆուտպոլի խումբ, խաղադաշտ (Ֆինիքիա), խաղի ժամանակ ֆուտպոլիստները նստում էին իրենց բերած աթոռների կամ քարերի վրայ:

«Գագոզ»ի գործով զբաղւում էր հանրաճանաչ Լութֆիկը (Մատամ Թոմ-Թոմ):

Հայրենադարձութիւնից յետոյ, «Ֆիքս»ի լաւագոյն վարպետներ՝ Յարութիւն Քեհեանը, եղբայրներ՝ Մանուկ եւ Յարութիւն Սեմէրճեանները, Յակոբ Ջուլֆայեանը (Սինկա), լիբանանահայեր Հայկ Կարմիրեանը (Հաճի), Քաջար Փոլանդեանը եւ ուրիշներ, նոր թափ հաղորդեցին սպորտի այս ձեւի զարգացմանը Հայաստանում: «Ֆիքս»ում էր հրատարակւում ամենօրեայ «Նոր Կեանք» եւ «Ազատ Օր» հայկական թերթերը:

1940 թ. մութ ամպերով պատուեց Էլլադայի երկնակամարը: Սկսուեց իտալական պատերազմը, որին յաջորդեց գերմանական ներխուժումը: Հիւանդութիւն, էպիտեմիա, սով, ճանապարհները փակուեցին, խանութները դատարկ, ազատ վաճառը վերացաւ, «քոփոններով» եգիպտացորենի հաց էին տալիս, ժողովուրդը կոտորւում էր, քաղաքում կատու շուն չէր մնացել, դիակները ուռած, փողոցներից հաւաքում տանում էին: Հարազատի մահուան դէպքում դիակը գաղտնի տանում թաղում էին, հասանելիքը ստանալու համար:

Անտանելի էր ֆաշիստների գազանային վերաբերմունքը ժողովրդի հետ: Նրանք ամէն ինչ անում էին ժողովրդին իրենց դէմ լարելու համար, դրանով իսկ նպաստում իրենց կործանմանը:

Եւ ահա կատարուեց անխուսափելին: Հայ կամաւորները, յոյն հայրենասէրների հետ բարձրացան մօտակայ լեռները, սկսուեց պայքար ֆաշիզմի դէմ:

Պայթում էին կամուրջները, գլորւում էին գնացքները, ծովափում եւ նաւահանգիստը պայթեցուած նաւերի կտորները հասնում էին մինչեւ «Ֆիքս»:

Իտալացիները չկարողացան մտնել Յունաստան, գերմանացիների արշաւն էլ այնքան յաջող չստացուեց, ինչպէս իրենք ծրագրած էին: Յոյն ժողովրդի հերոսական դիմադրութիւնը, Կրետէ կղզու պաշտպանութիւնը, խախտեց ֆաշիստների ծրագրած «Կայծակային Ներխուժումը»:

«Բարբարոս» պլանով, նախատեսուած էր Սովետների վրայ յարձակուել Մայիսի 15ի, Յունաստանը եւ Հարաւ Սլավեան գրաւելուց յետոյ:

Ապրիլ 13ին գրաւեցին Բելգրադը, 23ին գերմանական դրօշը Ակրոպոլի վրայ էր: Ապրիլի 30ին «Բարբարոս»ը T-21 դիրեկտիւով տեղափոխուեց Յունիսի 20ին:

Այս չորս շաբաթը, որ ֆաշիստները կորցրեցին Բալկաններում, սառեցրեցին նրանց զինուորներին Մոսկուայի տակ:

Սա շատ կարեւոր փաստ է, որ նշւում է պատութեան էջ, որպէս III Ռեյխի պարտութեան հիմնական պատճառներից մէկը:

Ֆաշիզմի դէմ մղուած հերոսական պայքարում փառքով պսակուեցին հայ ժողովրդի զաւակների անունները, որոնք յոյն ժողովրդի հետ պայքարեցին Էլլադայի ազատութեան համար: Յիշարժան են ֆիքսեցիներ՝ Կիտէլեկեան Մուրատը, որ Հաճնի հերոսամարտում զոհուած Համբարձում եւ Տիգրան Կիտէլեկեանների շառավիղներից է, Մկրտչեան Յովհաննէսը (Եոհան), Տէրտէրեան Մուրատը (Արջ Մուրատ), Ղուկասեան Անդրանիկը, Կերտանեան Գրիգորը (Յերօ) եւ ուրիշներ:



*Ֆիքսի հայ արիներու խումբը կեդրոնում խմբապետ՝ Պ. Պօղոսեան, ձախին առաջինը կանգնած եղբայրս՝ Գրիգոր Ճիգնեյեան, 1946*

Օկուպացիայի տարիներին մասսայական դիզերսեան կասեցնելու համար, ֆաշիստները 1944 թ. Օգոստոսի 9ին շրջափակեցին «Ֆիքս»ը: Յայտարարուեց – Տղամարդիկ պէտք է ներկայանան ստուգման, չներկայացողները կը գնդակահարուեն:

Այդ օրը գերմանացիները հրկիզեցին «Ֆիքս»ը Օգոստոս ամիս, անտանելի շոգ, խրճիթները չորացած «չրայի» նման այրւում էին, ովքեր մնացել էին նկուղներում դուրս եկան եւ գնդակահարուեցին, իսկ դուրս չեկողները՝ այրուեցին: Ներկայացած հայերին եւ յոյներին, ստուգումներից յետոյ, լցեցին բեռնատար վակոններ եւ աւտոմավար զինուորների հսկողութեամբ ուղարկեցին Գերմանիա: Այդ գնացքի մէջ էր նաեւ հայրս՝ Ղազարոս Ճիգնեյեան:

Այդ օրը գնդակահարուեցին «Ֆիսք»ի ազգային ազատագրական շարժման ղեկավար հերոսներ՝ Վահրամ Սագայեանը (հայաստանցի) եւ թաղի սիրուած լուսանկարիչ՝ Ղալեասը (ասորի):

Գերիների մի մասը պատերազմից յետոյ, 1945 թ. Օգոստոսին վերադարձան Յունաստան: Նրանք տանջել էին Միւնիխի եւ Շտուտգարտի կոնց. ճամբարներում:

Պատերազմից յետոյ Յունաստանը չխաղաղուեց, սկսեցին քաղաքացիական խռովութիւններ մինչեւ 1947 թ.:

Հայրենադարձութիւնը յունահայերը ընդունեցին մեծ խանդավառութեամբ:

1946-47 թթ. Յունաստանից Հայաստան ներգաղթել են մօտ 8 կարաւան:

Այդ նուիրական գործի համար Յունաստան էին եկել Դանուշ Շահվերտեանը, Բաբգէն Աստուածատուրեանը եւ ուրիշներ:

1946-47 թթ. «Ֆիքս»ից «Տրանսիլվանիա» եւ «Ջուկոտկա» նաւերով հայերը ներգաղթեցին Հայաստան:

Դատարկուեց պատմական «Ֆիքս»ը ինչինչ պատճառներով, փոքրաթիւ հայեր մնացին այնտեղ: Փոխել են «Ֆիքս»ի անունը, այժմ կոչւում են «Նէոս Քոսմա»:

Հայրենադարձութիւնից յետոյ յոյները մեծ շնորհակալական գործ են կատարել, «Ֆիքս»ի թաղային այգու մէջ կանգնեցրել են մի մեծ զանգակ, որ իր հնչիւն ղօղանջով միշտ թարմ է պահելու 1915-23 թթ. զոհուած անմեղ մեր հայրենակիցների անմահ յիշատակը:

Նոյն այգում զետեղել են մի մեծ ժայռաբեկոր յուշարձան, նուիրուած հայ-յոյն բարեկամութեանը:

**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**
**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Join Our New Music School in Pasadena
By Experineced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels
Professional Digital Recording studio
for all your audio recording needs

**1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104**
**Phones: (626) 797-8867 & (818) 599-1606**
**and**
**334 N. Central Avenue Unit 202**
**Glendale, CA 91203**
**Phones: (818) 244-8244 & (818) 599-1606**
**Visit us at: www.musiclessons4u.com**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՄՈՐԵԼԻԱ-ԼԻՆԱՐԵՍ ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ Է

*Հայաստանի գրոսմայստեր Լեւոն Արոնեանը սեւ ֆիգուրներով փայլուն յաղթանակ է տարել ուկրանացի Վասիլի Իվանչուկի նկատմամբ Մեքսիկայում ընթացող Մորելիա-Լինարես մրցաշարի 4-րդ փուլում եւ, վաստակելով 2,5 միաւոր, 4-րդ փուլից յետոյ բուլղարացի Վեսելին Տոպալովի եւ հնդկաստանցի Վիշվանաթան Անանդի հետ 2,5-ական միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը:*

*Մրցաշարի 4-րդ փուլի միւս պարտիաներում Վ. Անանդը ոչ-ոքի է խաղացել Ատրպէյճանի գրոսմայստեր Թեյմուր Ռաջաբովի հետ, Ալեքսեյ Շիրովը՝ Սպանիայից, յաղթել է Վ. Տոպալովին, իսկ նորվեգացի Մագնուս Կառլսենը ոչ-ոքի է խաղացել հունգարացի Պետեր Լեկոյի հետ: Ա. Շիրովը եւ Պ. Լեկոն ունեն 2-ական միաւոր, իսկ Մ. Կառլսենը, Վ. Իվանչուկը եւ Թ. Ռաջաբովը՝1,5-ական:-0-/18/ Մեքսիկայում ընթացող Մորելիա-Լինարես մրցաշարի 4-րդ փուլում եւ, վաստակելով 2,5 միաւոր, 4-րդ փուլից յետոյ բուլղարացի Վեսելին Տոպալովի եւ հնդկաստանցի Վիշվանաթան Անանդի հետ 2,5-ական միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը:*

*Մրցաշարի 4-րդ փուլի միւս պարտիաներում Վ. Անանդը ոչ-ոքի է խաղացել Ատրպէյճանի գրոսմայստեր Թեյմուր Ռաջաբովի հետ, Ալեքսեյ Շիրովը՝ Սպանիայից, յաղթել է Վ. Տոպալովին, իսկ նորվեգացի Մագնուս Կառլսենը ոչ-ոքի է խաղացել հունգարացի Պետեր Լեկոյի հետ: Ա. Շիրովը եւ Պ. Լեկոն ունեն 2-ական միաւոր, իսկ Մ. Կառլսենը, Վ. Իվանչուկը եւ Թ. Ռաջաբովը՝1,5-ական:*


**ԲԱՑՈՒԱԾ Է**

**Հիպնոսաբուժութեան կեդրոն**
**ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ**
**Արթին Սաղրեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն**
**մինչեւ կ.ե. ժամը 3:00**
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434–8118**
**միայն ժամադրութեամբ**

**«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.**
**-Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերճնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:**
**- Մոլութիւններ - սիկարէթ, ալքոլ, թմրադեղեր, եւայլն:**
**- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն:**
**- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:**
**- Ուսումնական եւ սքորթային բարելաւում**



**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ**
**18ը Ալիքի Վրայ**
**Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը**

**Շաբաթը 7 օր անվճար**
**Հարկ չկայ բաժանորդագրուելու – 40 Ցաւելեալ ալիքներ**

**Ցաւելեալ տեղեկութիւններու համար դիմել**
**Հայկական Թելեժամ (818) 982–2400**


### ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Մարտ 1 | Comedy Night |
| Մարտ 23 | Զատկուայ Տօնակատարութիւն |
| Ապրիլ 5 | Spanish Night |
| Ապրիլ 26 | Las Vegas Trip |
| Մայիս 11 | Մայրերու Օրուայ նախաճաշ |
| Յունիս 14 | Հայրերու Օր |
| Օգոստոս 10 | Հանգանակային ճաշկերոյթ «Մասիս» շաբաթաթերթի |
| Հոկտեմբեր 4 | Հ.Մ.Մ.ի Տարեկան Պարահանդէս |
| Դեկտեմբեր 31 | Նոր Տարուայ Խրախճանք |

## ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՄԲԻ 2008Թ. ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՆ 8 ԱԿՈՒՄԲՆԵՐ

*Արդէն վստահօրէն կարելի է ասել, որ ֆուտբոլի Հայաստանի բարձրագոյն խմբի 2008թ. առաջնութեանը մասնակցելու են 8 ակումբներ եւ մասնակիցների թիւը կրկին չի աւելանայ:*

*Ներքին առաջնութիւնում ունենալով ընդամէնը 8 խումբեր՝ իւրաքանչիւր մրցաշրջանից առաջ մեր ֆուտբոլային հասարակութիւնը անհամբերութեամբ սպասում է նոր խումբերի ի յայտ գալուն, սակայն վերջին տարիներին ակումբները հիմնականում լուծարւում են, քան աւելանում:*

*Այս տարի եւս ախոյեանութեան համար կը պայքարեն 8 խումբեր, սակայն ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այդ պայքարը իրականում ընթանալու է միայն «Փիւնիկի», «Բանանցի» եւ «Միկայի» միջեւ:*

*Եթէ մեր բարձրագոյն խմբի մասնակիցների քանակը համեմատենք եւրոպական միւս երկրների հետ, ապա կը պարզուի, որ Հայաստանը այս ցուցանիշով չի գերազանցում ոչ երկրի: Միայն Անդորրայի առաջնութիւնն է անցկացւում 8 խումբերի մասնակցութեամբ, իսկ մնացած բոլոր երկրներում առաջնութիւնները անցկացւում են 8-10 խումբերի պայքարում:*

*Օրինակ՝ 2010թ. աշխարհի առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի մրցակից Բոսնիայի առաջնութեանը մասնակցում են 16 խումբեր, իսկ Էստոնիայի առաջնութիւնում հանդէս են գալիս 10 ակումբներ: Աւելորդ է նշել Բելգիայի, Թուրքիայի եւ Սպանիայի առաջնութիւնների մասին, որոնք համարւում են առաջատարներ եւրոպական ֆուտբոլում:*

*Հարեւան Ատրպէյճանի եւ Վրաստանի առաջնութիւնները եւս մասնակիցների քանակով գերազանցում են Հայաստանին: Ատրպէյճանի առաջնութիւնում հանդէս են գալիս 14 խումբեր: Դրանց մեծ մասը ներկայացնում են մարզերը: Նոյնքան խումբ է մասնակցում նաեւ Վրաստանի առաջնութեանը:*

*Թէ Ատրպէյճանում, թէ Վրաստանում մեծ ուշադրութիւն է դարձւում մարզային ֆուտբոլի վրայ եւ գրեթէ բոլոր մարզերի ղեկավարները աջակցում են տեղի թիմերին՝ ապահովելով անհրաժեշտ միջոցներ պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումներին մասնակցելու համար: Իսկ Հայաստանի առաջնութիւնում ոչ երեւանեան խումբեր են միայն Կապանի «Գանձասարը» եւ Գիւմրիի «Շիրակը»: «Գանձասարը» այսօր ֆինանսական խնդիրներ չունի, քանի որ ակումբը հովանաւորում է Կապանում գործող պղնձամոլիբդենային գործարանը, իսկ «Շիրակը» անկախացած Հայաստանում միշտ հովանաւորել է գիւմրեցի գործարար Գառնիկ Խաչատրեանը: Իսկ միւս քաղաքներում այսօր ակումբներ չկան: Օրինակ, Վանաձորի «Լոռին», որը մեծ պատմութիւն ունէր արդէն մի քանի տարի է չի գործում: Նոյնը կարելի է ասել Աբովեանի «Կոտայքի» մասին, որ խորհրդային տարիներին «Արարատի» յետոյ 2-րդ ակումբն էր Հայաստանում եւ մեծ թուով կադրեր էր տալիս:*

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

*«Մասիս» շաբաթաթերթը, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, Հ.Մ.Մ.ը եւ յարակից Տիկնանց Միութիւնները կը շնորհաւորեն Տէր եւ Տիկ. Ժագ եւ Արմինէ Գազանճեանները, առջինեկ աղջիկ զաւակով բախտաւորուելուն առիթով: Այս առթիւ մեր ջերմ շնորհաւորանքները կը յայտնենք նորածինի մեծ ծնողաց՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն:*

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

*Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը շնորհաւորէ իր անդամներէն՝ Տէր եւ Տիկ. Երուանդ եւ Անիթա Իգնատոսեանները, երկուորեակ զաւակներով բախտաւորուելուն բարեբաստիկ առիթով: Այս առիթով կը շնորհաւորենք նաեւ երկուորեակներուն մեծ ծնողները՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Արփինէ Իգնատոսեանները:*

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

*Հ.Մ.Մ. կը շնորհաւորէ իր մարզական պատասխանատուներէն՝ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Անահիտ Քէօշկէրեանները, աղջիկ զաւակով բախտաւորուելուն ուրախ առիթով:*

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Ջելա Գարակէօզեանները վերջերս բախտաւորուած են աղջիկ զաւակով մը եւ զայն անուանած Փաթիլ:*

*Կը շնորհաւորենք նորածինն ու ծնողները, մասնաւորաբար մեծ հայրն ու մեծ մայրը՝ Տօքթ. Սարգիս եւ փրոֆ. Սիլվա Գարայեանն ու Տիկ. Անահիտ Գարակէօզեանն եւ համայն պարագաները:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Ժագ եւ Արմինէ Գալանճեանի աղջիկ զաւակով մը բախտաւորուելու ուրախ առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինը իր շնորհաւորութիւնները կը յայտնէ նորածինի ծնողքին, ընտանեկան համայն պարագաներուն եւ մասնաւորաբար նորածինի մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկին Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն:*

*Այս ուրախ առիթով փոխան ծաղկեկողովի $100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

# ՄԱՀԱԶԴ



***ՅԱՐՈՒԹ ՆՈՐՈՅԵԱՆ***
*(1944-2008)*

*Ցաւով կը գուժենք մահը մեր հարազատ եղբօր եւ ամուսինին Յարութ Նորոյեանին, որ պատահեցաւ Կիրակի, 17 Փետրուար 2008ի առաւօտեան ժամը 10ին St. Vincent հիւանդանոցին մէջ, Լոս Անճելըս, յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Թաղման կարգը տեղի պիտի ունենայ Ուրբաթ 22 Փետրուար 2008ին, կէսօրէ ետք ժամը 1:30ին, որմէ ետք մարմինը պիտի տեղափոխուի Hollywood Hill Barbank գերեզմանատունը ժամը 2:30ին:*

*Սգակիրներ՝*

*Այրին՝ Տիկ. Maya (Mkolajczyk) Նորոյեան*

*Քոյրը՝ Օր. Կիւլէն Նորոյեան*

*եւ համայն Իւրնէշլեան, Փամպուքեան, Գափլանեան, Եղիայեան, Գասպարեան եւ Ալէքսանեան ընտանիքներ:*

# ՍCLA-Ի ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ, ՔԵՍԱՊԻ ԵՒ ՏԷՕՐԹ-ԵՕԼԻ

*Շարունակուած էջ 6-էն*

*դոկտ. Հրայր Աթիկեան (Քեսապի Կրթասիրաց) Մուսա Տաղի եւ Քեսապի բարբառներէն կարճ ընթերցումներ եւ բացատրութիւններ պիտի ներկայացնեն:*

*Յետմիջօրէի առաջին նիստին, տիկ. Սոնա Զէյթլեան (Լոս Անճելըս) պիտի ներկայացնէ Մուսա Տաղի բանահիւսութեան շուրջ իր հետազօտութեան արդիւնքները: Պրն. Արա Սողոմոնեան (տոքթորական թեկնածու, UCLA) որ 1930-ական թուականներուն «Մուսա Տաղի քառասուն օրերը» վէպը ֆիլմի վերածելու ծրագրին սկզբնաղբիւրները պրպտած է, հոլիվուտեան գրաքննութեան այդ նմոյշին քիչ ծանօթ երեսակն երը պիտի ներկայացնէ: Իր կարգին, տոքթ. Քիթ Ուոթընփօ (Քալիֆորնիոյ համալսարան, Տէյվիս) պիտի կեդրոնանայ Ալեքսանտրէթի սանճագի 1930-ական թուականներուն ճգնաժամին հանդէպ հայերու եւ ալաուիներու հակազդեցութեան վրայ:*

*Վերջին նիստին, դոկտ. Հրանտ Խաչատուրեան (Սթէնֆըրտ համալսարան) պիտի խօսի մշակոյթի եւ անհատականութեան յարաբերութեան մասին, իբրեւ հիմք ընդունելով Այնճարի մէջ կատարած իր դաշտային աշխատանքը: Վահրամ Շէմմասեան յայտագիրը պիտի եզրափակէ Թուրքիոյ մէջ մնացած միակ հայկական գիւղին՝ Մուսա Լերան Վագըֆի (Սամանտաղ) համառօտ ներկայացումով: Ինչպէս նախորդ առիթներուն, տէր եւ տիկ. Ռիչըրտ եւ Աննա Ղլիզապէթ Ղլպրեխթ (Տէյվիս, Քալիֆորնիա) գիտաժողովին նիւթին նուիրուած լուսանկարչական ցուցահանդէս մը պիտի ներկայացնեն:*

*Գիտաժողովին մուտքը ազատ է: Ինքնաշարժները կարելի է կայանել UCLA համալսարանի Parking Structure 3-ին մէջ (մուտքը՝ Հիլկարտ պողոտայէն, Սընսէթ Պուվըրտի մօտերը _ Hilgard and Sunset), վճարելով 8.00 տոլարի սակ մը լման օրուան համար: Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք գրել փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանին՝ Hovannis@history.ucla.edu հասցէին:*

# ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԳԻՐՔԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*Միւս կողմէ, Լաստիվերտցին շատ զգացական կերպով ու ընդարձակօրէն կը գրէ Թուրքերու վայրագութեանց մասին, ըսելով թէ երբ անոնք քաղաք մը կը մտնէին, Արծն, Կարին կամ Անի, «քաղաքները կ'աւերէին, տուները կ'այրէին, ապարանքները հնոցներու կը վերածէին եւ արքայաշէն դահլիճները՝ մոխիրի: Այրեր հրապարակներու վրայ կը կոտորուէին, կիներ գերութեան կը տարուէին, երախաներ ժայռերուն դէմ կը զարնէին: Իրենք յոգնեցան, բայց անոնց սիրտը խղճմտանք չունեցաւ»: Արիստակէս միակն է հայ պատմիչներուն մէջ որ աւանդած է մեզի Սելճուքեան Թուրքերու սարսափազդու արհաւիրքներու մասին, ու այդ պատճառով ան կը մնայ ամենէն վաւերագրական գործը հայ պատմագրութեան մէջ, ու Լաստիվերտցին ալ՝ որպէս ականատես եւ ստուգապատում պատմիչ:*

## Թոնդրակեան Աղանդաւորներ

*Արիստակէս իր Պատմութեան 22րդ եւ 23րդ գլուխները յատկացուցած է Թոնդրակեան աղանդաւորներու տարածման ի Հայաստան ու ցոյց տուած անոնց բերած վտանգը հայ ժողովուրդին, որուն յարած էին նոյնիսկ հոգեւորականներ եւ հայ ազնուականներ: Ան կը յիշատակէ Հարք եւ Մանանաղի գաւառներու դէպքերը Հայոց Սարգիս Սեւանցի Կաթողիկոսին օրով (992-1019): Կուտայ անունը աղանդաւոր Յակոբ եպիսկոպոսի մը որ վարակուած էր «պիղծ ուսմունքով», եւ կը ջանար իրեն ենթարկել քահանաները որոնք տակաւին Հայ Եկեղեցւոյ ուղղափառ դաւանանքը կը պահէին:*

*Հայեր հալածեցին Յակոբը որ իսկոյն Կ. Պոլիս փախաւ, ուր եւս յոյներ չընդունեցին զինք որպէս աղանդաւոր, ու ետ Հայաստան վռնտեցին: Թոնդրակ գիւղին մէջ կարճատեն մը ապրելով, Յակոբ եպիսկոպոս մեռաւ: Սակայն, կ'ըսէ Արիստակէս, Յակոբի հետեւորդներէն Տուծիկ անուն աբեղայ մը, մի քանի կիներու միջոցաւ, շարունակեց տարածել Թոնդրակեան աղանդը Հայաստանի մէջ: Սա եւս Հայ Եկեղեցւոյ պատիժներուն ենթարկուեցաւ: Թոնդրակեան եւ Մծղնէական աղանդաւորները «Եկեղեցին եւ անոր կանոնները ամենեւին չէին ընդունիր. ո՛չ մկրտութիւնը, ո՛չ պատարագի մեծ ու ահաւոր խորհուրդը, ո՛չ խաչը եւ ո՛չ ալ պահեցողութեան կարգը»:*

## Յիշատակարան

*Արիստակէս Լաստիվերտցի իր երկի վերջաւորութեան ունի երկար եւ բովանդակալից Յիշատակարան մը, որ ինքնին «Ողբ» մըն է, գրքին մէջ երեւցող ահաւոր վիճակը ողբերգող: Ցիրաւի կարելի է զայն նկատել խտացեալ եւ կրկնուած ամփոփումը այն պատահարներու մասին զորս գրի առած է ընդարձակօրէն նախորդող գլուխներուն մէջ: Հոն կայ սակայն կարեւոր թուական մը՝ 482 Հայոց Թուականը (1033 թ. Քրիստոսի), որմէ «մինչեւ ցայժմ՝ ուխտ սրբութեան եւ կարգ եկեղեցւոյ քայքայեալ ապականեցան», կ'ըսէ, ընդգրկելով 38 տարուան շրջան մը: Այս է այդ փոքր հատուածին աշխար-հաբար թարգմանութիւնը.*

*«Սրբութեան ուխտը եւ եկեղեցւոյ կարգը քայքայուեցան ու ապականեցան: Ու չլսեցինք խաղաղութեան եւ կամ բարիքի աւետիսը հաղորդող ոչ մէկ լուր: Թագաւորներու եւ իշխաններու անունով ոչ մէկ արձան կանգնեցաւ: Եւ ոչ այդ միայն, այլ նաեւ կրօնաւորները չկարողացան դիմադրել պատերազմող դեւերուն, այլ տկարացած ու անզօր դարձած, անժուժկալ եւ կամակոր, թշնամիին ձեռքը ինկան, որու հետեւանքով երկիրը մեծ խռովութեամբ եւ բարկութեամբ ջլատուեցաւ: Մեր երկրին խաւարումը ճշմարիտ մարգարէութեամբ հաստատուեցաւ, որովհետեւ անկէ ետք թշնամիներ յարձակեցան մեր վրայ եւ մեզի սուգի եւ տրտմութեան զգեստներ հագուեցուցին, աշխարհէն վերցնելով ուրախութիւնը»:*

# «ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

*Շարունակուած էջ 15-էն*

*Աւարայրի յաղթանակի տօնահանդէսը շարունակուեցաւ Դաւիթ Բէկ օփերայի՝ Գուսանի երգով, կատարողութեամբ Ռազմիկ Մանսուրեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ փրոֆ. Լեւոն Աբրահամեանի:*

*Այս առթիւ, Թեմիս Բարեխնամ Առաջնորդը ողջունեց ներկայութիւնը Հայաստանի գլխաւոր հիւպատոս՝ մեծայարգ Տիար Արմէն Լիլոյեանի եւ իր անձնակազմին, Գանատայի թեմի երիտասարդ եւ կորովի առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ Եպս. Գալստանեանին, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր, ինչպէս նաեւ Արցախի թեմի Գանձասարի հովիւ՝ Տ. Յովհաննէս Քհնյ. Յովհաննիսեանին:*

*Ապա բեմ հրաւիրուեցաւ Գանատայի թեմի առաջնորդը՝ որ իր փակման խօսքին մէջ իր գոհունակութիւնը յայտնեց հոծ բազմութեան որ եկած էին հաւատքով՝ ո՛չ միայն հաղորդուելու Վարդանանցի Խորհուրդով, այլ նաեւ մեր սուրբ հոգեւոր գրականութիւնը ունկնդրելու եւ ըմբոշխնելու Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութեամբ: Առաջնորդ Սրբազանը մեծապէս գնահատեց Տօքթ. Մեսրոպեանի բանախօսութիւնը, ելոյթ ունեցող բոլոր արուեստագէտները, ինչպէս նաեւ օրուան հանդիսավարի ճարտար կատարողութիւնը: Ան իր գնահատանքը յայտնեց նաեւ գիրքի հրատարակիչներուն եւ խմբագրողներուն՝ Բրշ. Տօքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեանին, Բրշ. Հրայր Սրկ. Նալպանտեանին եւ Նահապետ Մելքոնեանին:*

*Եզրափակելով իր խօսքը ան յիշեց թէ «Աւարայրի նախօրեակին երբ իւրաքանչիւր զինուոր կը հաղորդուէր Քրիստոսի մարմինով եւ արիւնով, ըստ Եղիշէ Պատմիչի «ամէն մէկ զինուոր մէկ մէկ եկեղեցի դարձած էին», իմ մաղթանքս է, որ դուք ալ որպէս հաւատացեալներ Առաքելական Սուրբ եկեղեցւոյ, Վարդանանցի այսօրուան այս գեղեցիկ խորհուրդով հաղորդուելէ ետք, որպէս մէկ մէկ եկեղեցի դարձած, հաւատքով աւելի զօրացած մեկնինք այստեղէն»:*

*Հանդիսութիւնը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազան հօր պահպանիչով:*

*Ինչպէս յայտարարուած էր, բոլոր ներկաներուն ձրիաբար բաժնուեցաւ Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութիւն գիրքէն:*

*Յաւարտ յայտագրին տեղի ունեցաւ նաեւ պատշաճ հիւրասիրութիւն: Վարդանանց Տօնակատարութիւնը հովանաւորած էին Լոս Անճելըսի Ս. Յակոբ Եկեղեցին, Գոսթա Մեսայի Ս. Աստուածածին եկեղեցին, Լոս Անճելըսի Ս. Սարգիս եկեղեցին եւ Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութիւնը:*

*Մեծ Պահքի այս օրերուն, երբ Արեւագալի արարողութիւններ կը կատարուին հայ եկեղեցիներէն ներս, երբ «...Ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի» կ'երգեն հաւատացեալներ, միւս կողմէ... հեթանոսական աղբիւրէն «լոյս»ի շողեր ու ցոլքեր կ'իյնան հոգւոյն մէջ անոնց, որոնց միտքն ու հոգին տակաւ կը խարխափի պատմութեան էջերուն մէջ... հեթանոսական կարօտախտով:*

*Պօղոս Առաքեալ Կորնթացւոց իր թուղթին մէջ «զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» կը կոչէ Փրկչին: Անոր՝ որ մեզի սորվեցուց ի՞նչպէս աղօթել, որուն ուղղափառ մեկնութեան համար լոյս տեսաւ Տէրունական Աղօթքի գիրքը, աւելի մօտ բերելու մեզի յաւերժական Լոյսին:*

NOR SEROUNT TV LIVE
CHARTER CABLE CHANNEL 26 GLENDALE - BURBANK
EVERY THURSDAY 10.00 to 11.00 PM

# Դիմեցէ՛ք Բժ. Դաւիթ Դաւթեանին

NewHope Bariatrics®



**Բժ. Դաւիթ Դաւթեանը կը սեպուի LAPBAND-ի լաւագոյն մասնագէտ ռահվիրան որն ունի եզակի փորձառութիւնը եւ՝ իբրեւ մասնագէտ եւ՝ իբրեւ LapBand կրող անձ:**

**David G. Davtyan M.D., FACS, FICS,**
Board Certified - American Board of Surgery, American Board of Bariatric Medicine
American Society for Metabolic and Bariatric Surgeons

***110 Ֆունդ կշիռք կորսնցնելէն վերջ սկսեցի ինքզինքս բոլորովին նոր անձ մը տեսնալ: LapBand-ը եղաւ կեանքիս փրկութիւնը:***
*-- Տանիա Պ.*









*114 Ֆունդ կշիռ կորսնցնելը եւ հագուստեղենի 22 չափէն 4 չափին իջնալը, կեանքիս ամենէն յաճելի երեւոյթներէն մին եղած է, ԲԱՅՑ միայն մէկ ափսոսանք ունիմ՝ երանի աւելի կանուխէն LapBand ըլլայի:*
*-- Ռիմա Ք.*

Յիշեցէք՝
Եթէ հոգնած էք նիհարնալու միջոցներ փորձելէն եւ որոնելէն
Եթէ հոգնած էք չնիհարնալու յուսախաբութենէն
Եթէ կ՛ուզէք՝ ՆԻՀԱՐՆԱԼ ԱՐԱԳ եւ ԸՆԴՄԻՇՏ
Եթէ կ՛ուզէք՝ ըլլալ ԱՌՈՂՋ եւ ԳԵՂԵՑԻԿ
Դիմեցէ՛ք Բժ. Դաւիթ Դաւթեանին

NewHope Bariatrics®

BEVERLY HILLS OFFICE
11847 Wilshire Blvd., Suite 200
Los Angeles , CA 90025
(310) 500-3750

GLENDALE OFFICE
1141 N. Brand Blvd., Suite 300
Glendale, CA 91202
(818) 546-1500

www.LapBandLA.com
www.NewHopeToday.com
Info@NewHopeToday.com